ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ՄԱՅՐԵՆԻ 1»

ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

ՄԱՅՐԵՆԻ 1
ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Երևան-2023

ՀՏԴ
ԳՄԴ
Սվաջյան Ա. Հ., Միքայելյան Ա. Վ., Պետրոսյան Ս. Ս., Օհանյան Հ. Վ., Ուսումնական նյութերի հարմարեցումներ: Մայրենի 1 Այբբենական շրջան: Աշխատանքային գիրք-տետրի մեթոդական ուղեցույց ուսուցչի համար, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Եր.: Էդիթ Պրինտ, 2023. - 87 էջ
Մեթոդական ուղեցույցը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից որպես ուսումնական նյութ:
Մեթոդական ուղեցույցը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ մ. գ. թ., դոցենտ Ա. Հ. Սվաջյան

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գյուլամիրյան Ջ. Հ.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազատյան Թ. Յու.

Հեղինակներ՝
Սվաջյան Ա. Հ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Միքայելյան Ա. Վ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պետրոսյան Ս. Ս.
Օհանյան Հ. Վ.
Համակարգչային ձևավորում՝ Ստեփանյան Ա. Ռ., Դավթյան Հ. Լ..
Խմբագիր՝ Սարգսյան Հ. Ա.

Սույն ուղեցույցի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջին դասարանի «Մայրենի1» Այբբենական շրջան աշխատանքային գիրք-տետրի կիրառության գործընթացում ուսուցիչներին մեթոդական աջակցության տրամադրումն է:
ISBN ՀՏԴ
ԳՄԴ

Տպաքանակը՝ 150 օրինակ

©Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հարմարեցումների դերը կրթական համակարգում գրագիտության մարտահրավերների համատեքստում 4

Մայրենի առարկայի առաջադրանքների մեթոդական մշակումներ .. 15

Օգտագործված գրականության ցանկ..... 85

Հարմարեցումների դերը կրթական համակարգում գրագիտության մարտահրավերների համատեքստում

Մեր հասարակության մեջ գրագիտության կարևորության նկատմամբ վերաբերմունքը միանշանակ է: Գրագիտությունը կամ դրա բացակայությունն անդրադառնում է մարդու կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա: Այն կարող է խոչընդոտել շարունակական կրթությունը, սահմանափակել աշխատանքի հեռանկարները և նույնիսկ ազդել անհատի՝ իր կամ ուրիշների մասին հոգալու կարողության վրա (Munger, 2016):

Ժամանակակից աշխարհում կարևորվում է բոլոր երեխաների գրագիտությունը, ուստի մերօրյա դպրոցը պետք է դառնա գրագիտության ուսուցման արդյունավետ մեթոդներով զինված ուսումնական միջավայր (Morrow and Gambrell, 2019): Ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) (OCED 2015, Universal Basic Skills) վերջին տարիների վիճակագրական տվյալների՝ մեր կրթական համակարգը բախվում է գրագիտության խնդրի հետ: Այս համատեքստում օրակարգային հարց է դառնում կրթության բովանդակության և կազմակերպման ձևերի վերանայումը:

Արդի կրթական համակարգի կարևորագույն մարտահրավերներից մեկը ոչ միայն ժամանակակից պահանջներին համապատասխան կրթական չափորոշիչների, ուսումնական պլանների և նյութերի մշակումն է, այլև կրթական գործընթացին բոլոր սովորողների համահավասար մասնակցության ապահովումը: Հաճախ մանկավարժները կարծում են, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (ԿԱՊԿ) ունեցող երեխաների համար գրաճանաչության ուսուցումը երբեմն խրթին է, քանի որ շատ դեպքերում առաջադրանքները նրանց համար բարդ են կամ չեն համապատասխանում

նրանց կրթական կարիքներին: Սրանով պայմանավորված՝ ուսուցիչներից շատերը հրաժարվում են երեխաներին կարդալ, գրել սովորեցնել կամ մասնակիորեն են անդրադառնում դրան: Այս առումով հատկանշական են որոշ հետազոտողների պնդումներն առ այն, որ սովորողները, որոնք չեն կարողանում չափորոշիչներին համապատասխան առաջադիմություն գրանցել, կարող են այլընտրանքային տարբերակներով ուսուցման դեպքում հաջողել՝ իրենց կարիքներին և առանձնահատկություններին համապատասխան մեթոդների ընտրության պարագայում (Pressley, Allington, Wharton-McDonald, Block, and Morrow, 2001):

Հարմարեցումների դերը գրագիտության ուսուցման գործընթացում

ԿԱՊԿ ունեցող սովորողների համար գրաճանաչության արդյունավետ ուսուցման պլանավորումը դյուրին չէ, սակայն շատ կարևոր է երեխայի հետագա ուսումնառության համար: Որքան էլ շատ լինեն դժվարությունները գրաճանաչության ուսուցման ժամանակ, այնուամենայնիվ ուսուցիչները պետք է փորձեն գտնել դասավանդման առավել արդյունավետ և համապատասխան մեթոդներ ու մոտեցումներ: Գրաճանաչության ուսուցման գործընթացի արդյունավետ իրականացման համար կարևոր միջոցներ են նաև հարմարեցված ուսումնական նյութերը, որոնք կարող են ապահովել սովորողի ակտիվ մասնակցությունը ուսումնական գործընթացին: Սովորողի կարիքներին համապատասխան ուսուցման գործընթաց կազմակերպելու համար կարևոր է հաշվի առնել սովորողների անհատական կարիքներն ու կարողությունները և յուրաքանչյուր երեխայի ուսումնառությունը կազմակերպել մանրակրկիտ պլանավորման ու ստեղծագործական մոտեցման միջոցով: Այս տեսանկյունից չափազանց կարևոր է բացահայտել և չեզոքացնել բոլոր այն խոչընդոտները, որոնք խանգարում են սովորողին յուրացնել ուսումնական ծրագիրը, միևնույն ժամանակ՝ դյուրին դարձնել

ուսումնառությունը դասավանդման մեթոդների փոփոխությունների, հարմարեցումների և, անհրաժեշտության դեպքում, աջակցող սարքերի միջոցով:

Ուսումնական հարմարեցումները թույլ են տալիս սովորողներին արդյունավետ աշխատել իրենց հնարավորությունների սահմաններում: Դրանք նպատակաուղղված են օգնել երեխային՝ յուրացնել անհրաժեշտ տեղեկությունը, միևնույն ժամանակ կիրառել արդեն առկա գիտելիքներն ու կարողությունները:

Կարևոր է նաև, որ հարմարեցումները լինեն նպատակային, կոնկրետ երեխայի կարիքներին համապատասխան, իսկ դրա իրականացման համար կարևոր գործոն են ուսուցչի մասնագիտական գիտելիքներն ու փորձը: Այս տեսանկյունից էական է ուսուցիչների վերապատրաստումների և գրագիտության ուսուցման վերաբերյալ շարունակական կրթությունը, ինչի շնորհիվ նրանք կկարողանան արդյունավետորեն հարմարեցնել դասավանդումը բոլոր երեխաների կրթական կարիքներին (Seth A. Parson, Stephanie G. Davis, Roya Q. Scales, Baxter Williams, & Kathryn A. Kear, 2010):

Հնչյունային ընկալում և համադրում

Հաշվի առնելով երեխաների խոսքի, հիշողության, ընկալման առանձնահատկությունները՝ երբեմն դժվար է լինում հաղթահարել կարդալու ուսուցման հիմնական փուլերը: Այս առումով ձեռնարկում ներկայացված են գիտահեն մեթոդներ, որոնք կօգնեն հաղթահարել այս փուլերը և ուսումնական գործընթացը հասանելի դարձնել դասարանում սովորող բոլոր երեխաների համար: Հետազոտությունները պարզել են, որ ԿԱՊԿ ունեցող սովորողները ուսուցման համապատասխան հարմարեցման դեպքում կարող են նույնպիսի առաջընթաց գրանցել, ինչպես այն երեխաները, ովքեր փոքր-ինչ դանդաղ են առաջընթաց գրանցում տարրական դասարաններում (Beecher & Childre, 2012): Նույն հետազոտության մեջ նշվում է, որ ուսուցման

արդյունավետության համար կարևոր են ոչ միայն հարմարեցված ուսումնական նյութերը, այլ նաև դասավանդման ընթացքում կիրառվող մի շարք հնարներ, ինչպիսիք են հրահանգի փոփոխությունը, միաժամանակ մի քանի մեթոդի կիրառումը, օրինակ՝ բանավոր խոսքից զատ, ժեստերի լեզվի կիրառումը: Կամ եթե ուզում ենք երեխային սովորեցնել համադրել հնչյուններն ու ստանալ բառ, կարելի է օգտագործել տառերի նկարներ և առաջարկել, որ երեխան միացնի դրանք ու արտասանի բառը, և հակառակը՝ անջատի և արտասանի տառ-հնչյունները:

Պարզելու համար, թե արդյո՞ք երեխան կարողանում է ընկալել բառի հնչյունային պատկերը, կարելի է երեխային ցույց տալ 3 նկար և հերթով անվանել դրանք, այնուհետև անվանել հնչյունները և խնդրել, որ երեխան ցույց տա ճիշտ նկարը: Հայտնի է, որ կարդալու ամենափոքր միավորը վանկն է, սակայն, հնչյունների համադրման նպատակով կարելի է կիրառել նաև հետևյալ վարժությունը՝ արտասանել «բ» «ա» «դ» հնչյունները և տեսնել՝ արդյոք երեխան կարողանու՞մ է համադրել դրանք և գտնել ճիշտ բառը: Հետագայում առաջադրանքը կարող եք բարդացնել՝ առաջարկելով իրար նման բառեր, օրինակ՝ «մատ», «մաս», «մազ»:

Էլկոնինը նշում է հնչյունային ընկալման զարգացման 3 կարևոր գործոններ, այն է.

- բառում հնչյունների հաջորդականությունը որոշելու կարողության զարգացում,
- բառում հնչյունի դիրքը որոշելու ունակության զարգացում,
- բառում հնչյունների քանակը որոշելու ունակության զարգացում:

Կարևոր է սովորողներին տրամադրել հնարավորինս շատ օրինակներ, գույների միջոցով ընդգծել առաջին, վերջին, բառամիջի տառերը: Կարելի է կիրառել ուղղորդված ուսուցման օրինակներ, ինչպիսիք են առաջադրանքի կատարման ցուցադրությունը, հավելյալ ժամանակի տրամադրումը, դիդակտիկ նյութերի փոփոխությունը,

յուրաքանչյուր քայլ հաջողելուց հետո դրա խրախուսումը, առաջադրանքը կատարելու անհրաժեշտ ռազմավարության ուսուցանումը (Sharon Vaughn, Candace S. Bos, 2012)։ Կարևոր է սովորողներին հնարավորություն տալ կատարել աստիճանաբար բարդացող առաջադրանքներ, կարելի է ընդգրկել դասընկերներին՝ կազմակերպելով զույգերով աշխատանք, ինչպես առաջարկված է գիրք-տետրում։

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հնչյունային վերլուծությունը պետք է հստակ և համակարգված եղանակով ուսուցանվի այն երեխաներին, ովքեր դժվարությամբ են սովորում տառ-հնչյունային համադրումը (Riepl, Marchand-Martella, & Martella, 2008; Lemons, et al., 2012, NRP, 2000)։ Հնչյունային ընկալման և համադրման հստակ և համակարգված ուսուցումը ենթադրում է մանրակրկիտ պլանավորված մեթոդաբանությամբ տառ-հնչյունային համադրման ուսուցումը։ Այն ներառում է նաև մոդելավորում, ինչպես նաև ուսուցչի ուղղորդմամբ իրականացվող գործնական մաս։

Անծանոթ բառը կարդալու համար երեխան պետք է կարողանա ընկալել տվյալ բառի յուրաքանչյուր տառին համապատասխանող հնչյունը, ճիշտ հերթականությամբ մտապահել դրանք, այնուհետև համադրել՝ բառ կազմելու համար։ Սա կարող է դժվար առաջադրանք լինել ցանկացած նոր սովորողի համար, բայց կարող է առավել դժվար լինել ԿԱՊԿ ունեցող երեխաների համար՝ պայմանավորված կարճաժամկետ հիշողության, ուշադրության կամ խոսքի զարգացման դժվարություններով։

Կարճաժամկետ հիշողության խնդիրներ ունեցող սովորողների համար ընթերցումը, տառերը հնչյուններին համապատասխանեցնելը կարող է շատ դժվար լինել, քանի որ նրանք կարող են այդ ընթացքում դժվարանալ մտապահել դրանց հերթականությունը։ Երբ սովորողները հասնում են բառավերջին, նրանք սովորաբար մոռանում են բառասկզբի հնչյունները (WETA Washington, DC, 2007)։ Այնուամենայնիվ, եթե սովորողը չի կարողանում արտաբերել կամ

մատնանշել տառերը, ապա տառերի ընթերցումը՝ հնչյուններին համապատասխանեցնելը, կարող է բավականին դժվար լինել նաև այս պատճառներով:

Կարճաժամկետ հիշողության դժվարություններ ունեցող երեխայի հետ աշխատելիս հարկավոր է նվազեցնել հիշողության բեռը (Allor et al., 2010): Օրինակ՝ կարելի է սկսել պարզ միավանկ բառերից, ինչպիսիք են՝ «սա», «դա», «նա»: Ավելին, ժամանակի ընթացքում շատ սովորողներ կկարողանան մասերի բաժանել իրենց յուրացրած տեղեկատվությունը՝ նվազեցնելով հիշողության բեռը: Բազմիցս կրկնելու արդյունքում սովորողը կարող է հեշտությամբ ճանաչել «րան» վանկը այնպիսի բառերի մեջ, ինչպիսիք են «նստարան», «վառարան», «դասարան» բառերը, և ամեն անգամ առանձին չմտածել դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ: Այսինքն՝ սովորողի կողմից բառի մասը կճանաչվի ինքնաբերաբար՝ հնարավորություն ընձեռելով անցնել նոր կամ ավելի բարդ հնչյունախմբերի:

Կարճաժամկետ հիշողության խնդիրներ ունեցող սովորող-ներին կարող է օգնել նաև հնչյունների համադրման հետևյալ մեթոդը. տառերը հերթականությամբ առանձին-առանձին բարձրաձայն արտասանելու, այնուհետև միավորելու փոխարեն, ինչը հիմնականում հնչյունաբանական մոտեցում է, սովորողը ամեն մի նոր տառ արտասանելիս ընթացիկ միավորում է այն նախորդի հետ (Moats & Hall, 2010): Ուսուցիչը գրում է տվյալ բառի առաջին երկու տառը և ցույց տալիս՝ ինչպես համադրել դրանք հաջորդի հետ, և այսպես շարունակ, հնչյուն առ հնչյուն, մինչ վերջին տառի համադրումը և ամբողջական բառի արտասանումը՝ «կ», «կա», «կամ», «կամա», «կամար»: Ամեն անգամ նոր հնչյուն ավելացնելիս սովորողը բառասկզբից է սկսում՝ այսպիսով հնարավորություն ունենալով վերհիշել և կրկին արտասանել նախկին հնչյունները, ինչն իր հերթին մեծացնում է դրանց մտապահումը մինչև բառավերջին հասնելը: Ժամանակի

ընթացքում սովորողները կարողանում են ինքնուրույն կիրառել այս վարժանքը:

Թերևս այսքանով չեն սահմանափակվում ԿԱՊԿ ունեցող երեխաների համար այս գործընթացում հաջողելու դժվարությունները, սակայն ստեղծագործական միջոցների շնորհիվ խոչընդոտները կարող են նվազել:

Խոսքի զարգացման կամ շարժունակության դժվարություն ունեցող սովորողների համար հարկավոր է փոփոխել նյութերը, մեծացնել տառաչափը, տառերի միջև միջակայքը, օգնել սովորողներին՝ ուղղորդելով ձեռքի շարժումները տառերը մատնանշելիս: Այնուամենայնիվ, նախապես հարկավոր է համոզվել, որ սովորողները համաձայն են այս մոտեցմանը, քանի որ ոմանք կարող են դեմ լինել ֆիզիկական հպումներին, ինչը կստեղծի անհարմարություն՝ խոչընդոտելով մեթոդի կիրառման վերջնանպատակին և արդյունավետությանը: Եթե սովորողը խոսքի զարգացման խնդիրներ ունի, ապա ուսուցիչն ինքը կարող է սկզբում արտասանել հնչյունները, երբ սովորողը մատնանշում է տառերը, հետո առաջարկել նրան կրկնել, եթե կարող է: Չնայած այս ընթացքում սովորողն ինքնուրույն չի արտաբերում հնչյունները, ժամանակի ընթացքում նա կսովորի բառերը ճիշտ կարդալ:

Գլոբալ ընթերցանության ռազմավարություն

Հաշվի առնելով այն փաստը, որ զարգացման խանգարումներ ունեցող երեխաներին հաճախ են կարդալ սովորեցնում բառապատկերը մտապահելու միջոցով, կարող են լինել սովորողներ, որոնց հետ աշխատելիս բացառապես այս մեթոդը կիրառվի: Սակայն չի կարելի այս մեթոդը գերագնահատել. շատ սովորողներ նոր խնդիրների են բախվում ավելի բարդ տեքստեր կարդալիս, քանի որ տեքստերի բարդությանը զուգահեռ՝ բարդ, բազմավանկ բառերն առավել հաճախ են հանդիպում (Copeland & Keefe, 2007): Այսպիսով, չի կարելի

ակնկալել, որ երեխաները կհիշեն բոլոր բառերը, հակառակ դեպքում նրանց ընթերցանության հմտությունները կարող են չզարգանալ՝ մնալով նվազագույն մակարդակում: Այն դեպքերում, երբ երեխաները սովորել են կարդալ տեքստը բացառապես կամ գրեթե բացառապես միավանկ պարզ բառերի ճանաչման միջոցով, բառերն ընթերցելիս նրանք կդժվարանան հիմնվել տառ-հնչյունների համապատասխանության վրա: Սակայն կարևոր է նշել, որ այս մեթոդը կարող է բավականին արդյունավետ լինել նոր և բարդ բառեր կարդալ սովորեցնելիս:

Ընկալում և բառապաշար

Ընթերցանության հիմնական նպատակը տեքստի իմաստի ընկալումն է: Միայն բառերի ընթերցումը բավական չէ, եթե դրանց իմաստը հասկանալի չէ ընթերցողին: Առհասարակ, ինքնուրույն տեքստը կարդալու համար հարկավոր է նախևառաջ բառերը ճիշտ կարդալ և հասկանալ: Երբեմն նշում են, որ սովորողները սկսում են տեքստի իմաստը հասկանալ, երբ սովորում են բառերը ճիշտ արտասանել, սակայն ըստ որոշ հետազոտողների՝ սա միանշանակ չէ, և սովորողներին հարկավոր է բացատրել՝ ինչպես մտածել իրենց կարդացածը հասկանալու և միտքը ձևակերպելու համար: (Donin, 2004): Բառերի իմաստի իմացությունը կարևոր է սովորողի ընդհանուր առաջադիմության համար, քանի որ ուսումնական նյութի բովանդակության ընկալման հիմքը դպրոցական տեքստերի խորը ընկալումն է (Beach, Sanchez, Flynn, & O'Connor, 2015):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համապատասխան բառապաշարի իմացությունն ազդում է սովորողի՝ տվյալ բովանդակության ընկալման վրա և ընդհանուր առաջընթացի հիմնական որոշիչ գործոնն է (Townsend, Filippini, Collins, & Biancaros, 2012): Հետազոտությունները նաև ցույց են տվել, որ բառապաշարի իմացությունը և ընթերցածն ըմբռնելու հմտությունը զգալի կերպով

փոխկապակցված են (Rupley & Nichols, 2005; Cunningham & Stanovich, 1997):

Տեքստի ընկալման հմտությունների ուսուցումը

Տեքստի ըմբռնումն անկասկած բարդ է, իսկ զարգացման խանգարումներ ունեցող սովորողների համար այն առավել դժվար է: Սովորողներից ոմանք դժվարանում են տեղեկատվությունը մտապահել և մշակել և աջակցության կարիք ունեն տեղեկատվությունը պահպանելու գործընթացում: Տեղեկատվության մշակման կամ խոսքի դժվարություններ ունեցող սովորողները կարող են բախվել ընկալման խնդիրների հետ: Ավելին, զարգացման խանգարումներ ունեցող երեխաները կարող են դժվարանալ ցույց տալ, որ հասկացել են նյութը, և սա կարող է սխալմամբ դիտարկվել որպես ըմբռնման բացակայություն (Kluth & Chandler-Olcott, 2008):

Զարգացման խանգարումներ ունեցող սովորողները լրացուցիչ մարտահրավերների են բախվում տեքստի ընկալման ժամանակ: Օրինակ՝ հիշողության հետ կապված դժվարություններ ունեցող սովորողները հաճախ դժվարանում են հիշել այն, ինչ կարդացել են, ուստի, կարևոր է սովորեցնել նրանց՝ ինչպես մտապահել տեղեկատվությունը: Խոսքի զարգացման խնդիրներ ունեցող սովորողները կարող են բառը չհասկանալ: Բացի այդ, մի շարք սովորողներ, հատկապես աուտիզմ ունեցողները, կարող են դժվարանալ եզրակացություններ անել, եթե բառացի նշանակությամբ մեկնաբանեն բառիմաստը (Kluth & Chandler-Olcott, 2008): Սովորողները պետք է կարողանան կարդալ, լսել և աշխատել գրականությունից վերցրած իրենց տարիքին համապատասխան այլ տեքստերի հետ, թեև, որոշ դեպքերում, սովորողների կրթական կարիքներով պայմանավորված, անհրաժեշտ կլինի փոփոխել տեքստի որոշ մասեր (Browder, Trela, & Jiminez, 2007):

Որոշ հետազոտությունների համաձայն՝ ԿԱՊԿ ունեցող երեխաներին կարելի է սովորեցնել վերահսկել իրենց ընկալման գործընթացը (Hudson & Test, 2011; Whalon & Hanline, 2008)։ Սրան հասնելու ուղիներից մեկը հետևյալն է. սովորողների համար բարձրաձայն տեքստեր ընթերցելիս ուսուցիչը որոշ հատվածներում դադար է տալիս՝ բացատրելու հատվածի նշանակությունը, հասկանալու՝ նրանք ինչպես են ընկալում տեքստը և ինչպես են արձագանքում, կամ ինչպես են կռահում, թե ինչ է լինելու հետո։ Այն սովորողների դեպքում, ովքեր դժվարանում են եզրակացություններ անել, ուսուցիչը կարող է դադար տալ կարևոր հատվածներում և նրանց ուշադրությունը հրավիրել տեքստի որոշակի հուշումներին (օրինակ, կերպարի վարքագծին կամ արտահայտություններին) և բացատրել, թե ինչ դեր են խաղում այս կարևոր հուշումները կերպարներն հասկանալու համար։ Սովորողները նույնպես կարող են ակտիվ մասնակցություն ունենալ այս գործընթացում, օրինակ՝ ուսուցիչը կարող է սովորողներին հարցնել, թե դեմքի ինչ արտահայտություն է ունենում մարդը, ով պատրաստվում է նենգ արարք գործել։ Սովորողները կարող են փորձել իրենց դեմքի արտահայտությամբ պատասխանել այս հարցին, այնուհետև ուսուցիչը կարող է ներկայացնել տեքստի տվյալ հատվածում նենգությունը նկարագրող արտահայտությունները՝ «խորամանկ աչքեր», «դավադիր հայացք»։

Այս գործընթացն օգնում է սովորողներին հասկանալ նոր բառերը։ Բարդ կամ անծանոթ բառի հանդիպելիս՝ ուսուցիչը կարող է բացատրել սովորողներին՝ ինչպես հասկանալ բառի նշանակությունը՝ հաշվի առնելով համատեքստը, քննարկել հետաքրքիր բառերը, օգնել սովորողներին կիրառել դրանք դասի ընթացքում։ Այս մեխանիզմը չի ենթադրում ընթերցանություն. այն գերազանց միջոց է կարդալ չիմացող սովորողներին հաղորդակցման մեջ ներգրավելու և ավելին հասկանալ տալու համար։ Ուսուցիչները կարող են օգնել երեխաներին՝ սովորեցնելով նրանց հարցեր տալ՝ կիրառելով հարցական

բառեր, օրինակ՝ ո՞վ, ե՞րբ, որտե՞ղ, կամ ամփոփել նախադասությունները՝ կիրառելով օրինակ, նախ, առաջինը, սկզբում, հետո, վերջում և այլն։

ԿԱՊԿ ունեցող երեխաներին նյութի բովանդակության ընկալման և բառապաշարի զարգացման համար կարող են օգտագործվել ուսուցանման հստակ, կարճ և հաջորդական հրահանգներ, որոնց բազմաթիվ օրինակները ներկայացված են գիրք-տետրում։ Կարևոր է նաև ուսումնական թեման ընտրելուց հետո առանձնացնել այն բառերը, որոնք անհրաժեշտ են տվյալ թեման հասկանալու համար։ Ուսուցիչը կարող է սովորեցնել այդ բառերն առանձին-առանձին, հստակեցնել նշանակությունը նկարների կամ պատկերավոր այլ մեկնաբանությունների օգնությամբ, ինչպես նաև տվյալ բառերի կիրառման օրինակների միջոցով։

Մայրենի առարկայի առաջադրանքների մեթոդական մշակումներ (այբբենական շրջան)

Սույն մեթոդական ուղեցույցն ստեղծված է այբբենարանին կից (այբբենական շրջան) առաջադրանքների մեթոդական սկզբունքների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար դրանց իրականացման առանձնահատկությունների մեկնաբանման և արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով:

Գրաճանաչության բուն այբբենական կամ գրուսուցման շրջանում առաջարկվող առաջադրանքների միջոցով լուծում ենք ոչ միայն կարդալու և գրելու կարողության ձևավորման ու զարգացման խնդիրներ, այլև շարունակում ենք դրանց միջոցով զարգացնել բոլոր հոգեկան գործընթացները, մասնավորապես վերլուծահամադրական կարողությունները, որը կարդալու և գրելու հիմքն է, հույզերը, զգայարանները՝ տեսողական և լսողական ընկալումները, կամային որակները, ճանաչողական հետաքրքրությունը, խոսքի բոլոր բաղադրիչները, ինքնուրույնությունն ու ստեղծարարությունը, ինչպես նաև կազմակերպչական, ուսումնական, անձի ընդհանուր զարգացման կարևորագույն խնդիրներ:

Գիրք-տետրում ներկայացված առաջադրանքների պահանջներում ներառված են դեռևս նախաայբբենական շրջանում նախատեսված խնդիրների լուծմանը միտված աշխատանքի ձևեր, քանի որ հայտնի է, որ ԿԱՊԿ ունեցող երեխաները կա՛մ շուտ մոռանում են, կա՛մ չեն յուրացնում, և հետևաբար բազմակի կրկնությունների անհրաժեշտություն է առաջանում, օրինակ՝ գույնի, չափի, տարածական պատկերացումների, առարկաների ձևերի, դրանց անվանումների, հնչյունային, տեսողական, լսողական ընկալումների զարգացմանը միտված առաջադրանքներ:

Ճիշտ նստել, տետրը ճիշտ դնել սեղանին՝ ձեռքով պահելով այն, ճիշտ բռնել գրիչը, պահպանել գրելու հիգիենան, պահել տողի ուղղությունը, չանցնել լուսանցքը. այս կարողությունների զարգացման համար անհրաժեշտ է շարունակել դեռևս նախաայբբենական շրջանում իրականացրած մանր ու խոշոր մկանների, տարածության մեջ կողմնորոշվելու կարողության զարգացման աշխատանքները:

Անշուշտ, բուն գրաճանաչության շրջանի դասանյութերի մեթոդական մշակումներն առկա են, և ուսուցիչներն իրենց դասերը պլանավորելիս կկիրառեն դրանք՝ առաջնորդվելով կարդալու և գրելու ուսուցման՝ ընդունված և գիտականորեն հիմնավորված մեթոդական պահանջներով: Սակայն գիրք-տետրը հնարավորություն է տալիս անհատական և տարբերակված մոտեցում ցուցաբերել ուսման մեջ դժվարություններ ունեցող աշակերտներին՝ պարզեցնելով ու հարմարեցնելով դասագրքում (այբբենարաններում) առկա ուսումնական նյութը:

Հնչյուն-տառերի ուսուցման հարմարեցված առաջադրանքները կառուցված են հետևյալ հաջորդական գործողություններով՝

1. Առաջին քայլով յուրաքանչյուր ուսումնասիրվող հնչյունը պետք է առանձնացվի խոսքից.
   ա) ուսումնասիրվող հնչյունը պարունակող նկարների առանձնացում,
   բ) տվյալ հնչյունի ընկալում, բառում ունեցած դիրքի որոշում,
   գ) հնչյունի արտասանում և այլն:
2. Հնչյուն-տառերի ուսուցման 2-րդ քայլը ուսումնասիրվող հնչյունին համապատասխանող տառի ճանաչումն է, որին պետք է անցնել միայն այն բանից հետո, երբ հնչյունն ընկալվել է բառի տարբեր դիրքերում: ԿԱՊԿ ունեցող երեխաների համար այս կապն ստեղծելը շատ բարդ է: Այդ խնդրի լուծմանն են միտված ձեռնարկում առաջարկվող վարժությունները (36, 37, 38, 40, 42, 44, 49, 50, 51, 52, 63, 64, 65 և այլն):

3. Կարդալու ուսուցման առավել բարդ աստիճանը հնչյունների համադրումն է վանկում: Այդ դժվարությունը հաղթահարելու համար ԿԱՊԿ ունեցող աշակերտներին առաջարկում ենք կարդալ միավանկ բառեր, որոնք իմաստավորված են և աշակերտի համար կարդալու դրդապատճառ են ստեղծում: Այս փուլում առաջարկել ենք նաև ամբողջական բառապատկերների (միավանկ) ճանաչում և առանձնացում տրված բառ-վանկերի շարքից (73, 84, 100, 117, 134, 146, 158 և այլն):
4. Կարդալու ուսուցման գործընթացի հաջորդ փուլում առաջարկում ենք նմանօրինակ վարժություններ՝
   - «կարդալ» նկար-բառերը,
   - կարդալ վանկի առաջին հնչյունը բարձրաձայն, հետո՝ վանկն ամբողջությամբ,
   - վանկի երկրորդ հնչյունը կարդալ մտքում, ապա՝ բարձրաձայն ամբողջ վանկը,
   - գույներով համապատասխանեցնել վանկերը՝ ստանալով բառեր, և կարդալ դրանք. իր ստեղծած բառը երեխան ավելի հեշտությամբ է կարդում,
   - խառը տառերը դասավորել այնպես, որ ստացվի նկարում պատկերված առարկայի անվանումը, կարդալ բառը և այլն:
5. Առաջադրանքների հաջորդ խումբը վերաբերում է գրելու վարժություններին՝ տառանշանի ճանաչում և անվանում, տառապատկերի մտապահմանը նպաստող տարաբնույթ աշխատանքներ՝ տառապատկերի գունավորում, մասնիկներից տառի հավաքում, կետագծերով տառապատկերի ստացում, տրված տառանշանների շարքից ուսումնասիրվող տառի առանձնացում, տառի գրառում տարբեր իրավիճակներում և այլն:

Շատ կարևոր է, որ երեխայի կողմից գրվող առաջին բառն արդեն լինի իր սեփականը, որը կարտահայտի սեփական դիտարկումը, զգացմունքը կամ կենսափորձը: Այս խնդիրը լուծելու համար սոսկ

տառագրական վարժությունները բավարար չեն. հաճախ դրանց չափից շատ կիրառումը կարող է հակառակ ազդեցությունն ունենալ. ԿԱՊԿ ունեցող երեխան ոչ միայն թույլ կտա տառագրական լուրջ սխալներ, այլև ուսումնական գործընթացը կկրի հուսահատեցնող բնույթ, երեխաները կապրեն անօգնականության հոգեվիճակ, որն է՝ ավելի կընդգծի նրանց դժվարությունները, կխորացնի դրանք և այլն: Դրանից խուսափելու համար առաջարկում ենք այլազան հետաքրքրաշարժ աշխատանք, որը երեխաներին հաճույք կպատճառի.

- Տրված տառերից (թե՝ տպագիր և թե՝ ձեռագիր) ընտրել կրկնվող տառերը և անվանել (23, 36, 49, 63, 79, 94, 112, 126, 141, 152, 163, 171 և այլն):
- Տրված են տառեր, որոնց վրա շփոթեցնող գծեր են տարված: Երեխաները պետք է տարորոշեն, ճանաչեն տառերը և անվանեն դրանք (սկզբում առաջարկել ենք երեխաներին քաջ ծանոթ տառերը), օրինակ՝ առաջադրանքներ 217, 218, 339, 381, 518, 519 և այլն:
- Տառերը տրված են որոշակի անկյան տակ կամ շրջված են: Երեխաները պետք է ճանաչեն և անվանեն դրանք (190, 255, 256, 339 և այլն):
- Եզրագծել կետագծերով տրված տառերը՝ գունավոր մատիտներով առանձնացնելով դրանց մասնիկները (286, 300, 312, 325, 340, 355, 367 և այլն):
- Ճանաչել և անվանել իրար վրա դրված տառերը:
- Փոխելով տառի այս կամ այն մասնիկը՝ ստանալ նոր տառ, օրինակ, ի-խ, հ-ի, լ-ը և այլն:

Առանձին դեպքերում որոշ աշակերտների կարելի է առաջարկել օժանդակ տողերով տետրեր, սակայն այս աշխատանքը պետք է կրի խիստ անհատական բնույթ, հակառակ դեպքում երեխաները կարող են

վարժվել աշխատելու այդ ձևին և դժվարանալ տառն ինքնուրույն գրելիս:

Տառերի հաջորդականության ընտրությունը կատարել ենք՝ հաշվի առնելով գործող այբբենարաններում առկա մոտեցումները, սակայն հիմնականում կարևորել ենք այն սկզբունքները, որոնք բխում են ԿԱՊԿ ունեցող երեխաների զարգացման առանձնահատկություններից.

- նման հնչողություն ունեցող հնչյունների ուսումնասիրումը նախատեսել ենք որոշակի ընդմիջումով, անցած հնչյուն-տառերի ամրապնդումից հետո, որպեսզի դրանք չշփոթեն:
- Յուրաքանչյուր հնչյուն-տառի յուրացման ուղղությամբ և՛ երկարատև կրկնությունների, և՛ այլազան վարժություններ իրականացնելու կարիք կա:

Առաջադրանքներում ընդգրկել ենք նաև հանելուկներ, շուտասելուկներ, որոնք երեխաների խոսքի՝ հատկապես արտասանական կողմի, մտածողության, վերլուծահամադրական կարողությունների զարգացման, ուսուցման գործընթացը հետաքրքիր և դյուրին դարձնելու արդյունավետ միջոց են: Այս տեսանկյունից գրաճանաչության շրջանն ամենաբարենպաստն է մի շարք հնչյուն-ների ու բառերի արտասանության ճշգրտման, արտաբերական կառույցի մարզման ու ամրապնդման համար. անառարկելի է, որ բառի ճիշտ արտասանությունը կարևոր է վերջինիս ճիշտ գրության գործընթացում:

Յուրաքանչյուր հաջորդ տառի վերաբերյալ առաջադրանքները ներառում են անդրադարձ նախորդ տառերին. կրկնություն, համեմատություն, տարբերությունների հայտնաբերում, համադրում, նոր բառերի, բառակապակցությունների, նախադասությունների մեջ կիրառում այլն: Հավելենք, որ առաջադրանքների բովանդակության մեջ ներառել ենք գործող այբբենարաններում առկա խոսքային նյութը (բառապաշար, խոսքային կառույցներ, բնագրերից հատվածներ),

առարկայական նկարները, թեմատիկ նկարների և նկար-պատմությունների բովանդակությունը և այլն:

Առաջադրանքների կատարման ընթացքում հաշվի ենք առել նաև դասարանի մյուս աշակերտների ակտիվ մասնակցությունը, որը, մեր խորին համոզմամբ, ուսուցման լավագույն միջոց է («երեխան երեխային» սկզբունքով), օրինակ՝ առաջադրանքներ 1, 7, 10, 25 և այլն. դրանց իրականացման մեթոդիկան ներկայացված է ուղեցույցի համապատասխան առաջադրանքների մեթոդական ցուցումներում:

Առաջադրանքների մեծ մասն ունի կատարման օրինակը: Այն առաջադրանքներում, որոնցում տրված չէ օրինակը, ենթադրվում է, որ աշակերտը նախորդների տրամաբանությամբ պետք է կատարի այն: Սակայն, եթե դժվարանա, առաջարկում ենք ուսուցչին տալ օրինակը:

Գիրք-տետրում ընդգրկված առաջադրանքներն ունեն խաղային բնույթ, հետաքրքիր են, մատչելի: Դրանց կատարման ընթացքում երեխան գործողություններ է կատարում՝ տեղադրում է, դասավորում է, փակցնում է և այլն, խոսում է, համեմատում է, հակադրում է, հայտնաբերում է, պատկերացնում է, մտապահում ու մտաբերում է, կենտրոնացնում է ուշադրությունը, կամային ճիգեր է գործադրում և այլն: Առաջադրանքների համար ընտրված նկարները, տառապատկերներն ունեն վառ գունավորում, առավելագույն մոտ են բնական առարկաներին: Նկարներով աշխատելիս պետք է հարցերի օգնությամբ երեխաներին ուղղորդել՝ նկատելու նկարի բոլոր տարրերը, երբեմն՝ կռահելու նկարի այն հատվածը, որը չի նկարված:

Գիրք-տետրի նյութերը ոչ միայն պարզեցված են, այլև առավել գրավիչ են, հետաքրքրաշարժ, ներկայացված են սիմվոլներով: Օրինակ, առարկայական նկարները, բառերի գծապատկերները՝ կարմիր և կապույտ վանդակներով, վանկային կորերով, կետագծերով տառերը: Միևնույն տառը հանդիպում է տարբեր չափերով, գույներով, ձևերով, կտրտված մասնիկներով, տարբեր տեղադրություններով, տպագիր, ձեռագիր և այլն:

Ներկայացված առաջադրանքներում հաշվի են առնված նաև միջառարկայական կապերը «Մաթեմատիկա», «Տեխնոլոգիա», «Կերպարվեստ», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների հետ, օրինակ՝ առաջադրանքներ 22, 126, 135, 141, 147, 204, 241, 394 և այլն:

Գիրք-տետրի վերջին էջում տեղադրված են կարմիր և կապույտ տնակները. յուրաքանչյուր հնչյունի ուսումնասիրման ընթացքում որոշում ենք նաև դրա՝ ձայնավոր կամ բաղաձայն լինելը և յուրաքանչյուր հնչյուն-տառի ուսուցման ընթացքում այն տեղադրում համապատասխան տնակում: Աշխատանքների ընթացքում ևս կարելի է այդ էջում կատարել տարաբնույթ վարժություններ: Օրինակ՝ տառերից մեկը որոշել է հյուր գնալ հարևան տնակում բնակվող տառերին. արդյունքում ստացվում է վանկ, բառ և այլն: Ոչ միշտ է, որ այս կամ այն առաջադրանքը առկա է յուրաքանչյուր հաջորդ հնչյուն-տառերի ուսուցման ընթացքում: Սակայն ուսուցիչը կարող է դրանք շարունակել կիրառել նաև հետագա աշխատանքներում՝ հարմարեցնելով ուսումնասիրվող հնչյուն-տառերին:

Մեր խորին համոզմամբ գիրք-տետրում ներկայացված առաջադրանքները կնպաստեն նաև աշակերտների ինքնուրույ-նության, ստեղծարարության զարգացմանը՝ որոշ դժվարություններ հաղթահարելու ճանապարհով: Այս շրջանում ևս կարևորում ենք երեխաների խոսքը, վերլուծահամադրական մտածողությունը, դիտողականությունը զարգացնելու հարցը:

Նշենք, որ գիրք-տետրում ներկայացված ցանկացած առաջադրանք կարելի է կիրառել ստեղծագործաբար, սակայն՝ հաշվի առնելով վերը նշված սկզբունքային մոտեցումները և սովորողների անհատական կարիքները:

Ստորև ներկայացնում ենք առաջադրանքների մեթոդական ցուցումները:

Առաջադրանք 1.

Անվանի՛ր պատկերված առարկաները: Նշի՛ր այն նկարները, որոնց անվանումները սկսվում են *ա* հնչյունով:

Առաջադրանքի նպատակն է ուսումնասիրվող հնչյունի՝ բառից առանձնացումը, հնչյունային լսողության զարգացումը, հնչյունի (բառի) ճիշտ արտաբերումը, շրջապատող առարկաների մասին պատկերացումների ընդլայնումը:

Եթե երեխան դժվարանում է անվանել պատկերները, առաջարկում ենք աշխատել զույգով. աշակերտներից մեկը կամ ուսուցիչը կանվանի նկարում պատկերվածը, իսկ ԿԱՊԿ ունեցող աշակերտը նշում կանի վանդակում՝ անվանելով նկարը:

Գիրք-տետրում տրված պատկերներն անվանելուց հետո կարող ենք սովորողներին խնդրել անվանել շրջապատող իրերը և նշել, թե դրանցից որոնք են սկսվում «ա» հնչյունով:

Առաջադրանք 2.

Գունավորի՛ր այն առարկայի նկարը, որի անվանման մեջ լսվում է *ա* հնչյունը:

Այս առաջադրանքը ևս միտված է ուսումնասիրվող հնչյունը բառում ճանաչելուն, նրա տեղը որոշելուն, վերլուծելու կարողության զագացմանը, ինչպես նաև մանր մկանների աշխատանքի միջոցով ձեռքը գրելուն նախապատրաստելուն:

Առաջադրանքը կատարելիս երեխան նախապես չի անվանում առարկաները, որպեսզի տվյալ գործողությունը կատարի մտային պլանում: Նպատակը ինքնուրույն մտավոր գործողություններ կատարելու կարողության զարգացումն է: Սակայն եթե դժվարանա, ուսուցիչը կարող է կա՛մ ինքն անվանել, կա՛մ էլ առաջարկել, որ երեխան անվանի պատկերված առարկաները (բարձրաձայն արտաբերումը կնպաստի հնչյունի ընկալմանը), որից հետո՝ գունավորի:

Առաջադրանք 3.

Անվանի՛ր պատկերված առարկաները: Ընտրի՛ր և նշի՛ր այն նկարները, որոնց անվանումներում *ա* հնչյունը բառամիջում է:

Այս առաջադրանքի կատարումը ևս հնարավորություն է տալիս երեխային հետաքրքրաշարժ նկարների միջոցով կենտրոնանալ ուսումնասիրվող հնչյունի վրա, այս անգամ՝ բառամիջում: Առաջադրանքի կատարումը կարող է բարդացնել այն հանգամանքը, որ նկարների շարքում կան պատկերներ, որոնց անվանումները սկսվում են *ա* հնչյունով, ինչը կարող է շփոթեցնել երեխային: Սակայն վարժության նպատակը հենց այն է, որ երեխան սովորի տարբերել բառասկիզբն ու բառամեջը, չնայած որ նման աշխատանքներ իրականացվել են նաև գրաճանաչության նախապատրաստական շրջանում: Դժվարանալու դեպքում ուսուցիչը կարող է ինքն անվանել նկարները՝ ընդգծված արտասանելով *ա* հնչյունը:

Առաջադրանք 4.

Ասա՛ մարմնի մասեր, որոնք սկսվում են *ա* հնչյունով:

Այս առաջադրանքը, նախորդի համեմատ, մեծացնում է երեխայի ինքնուրույնությունը: Այստեղ պահանջվում է ուշադիր զննել սեփական մարմինը և անվանել *ա* հնչյունով սկսվող մարմնի մասերը՝ *ականջ, ատամ, այտ*: Առաջադրանքը կատարելուց հետո ուսուցիչը կարող է առաջարկել երեխային անվանել շրջապատում առկա *ա* հնչյունով սկսվող առարկաներ: Եթե երեխան հաջողությամբ կատարում է առաջադրանքը, կարելի է այն զարգացնել՝ առաջարկելով անվանել առարկաներ, որոնցում *ա* հնչյունը բառամիջում է, իսկ որ ավելի բարդ է՝ բառավերջում:

Առաջադրանք 5.

Կարմիր մատիտով գունավորի՛ր *ա* փոքրատառը:

Նշված առաջադրանքի նպատակն է անուղղակի ձևով երեխայի ուշադրությունը կենտրոնացնել *Ա ա* տառապատկերների վրա, իսկ շեշտելով փոքրատառը գունավորելու պահանջը՝ տարբերակել մեծատառն ու փոքրատառը: Միևնույն ժամանակ, առաջադրանքի կատարումը զարգացնում է մանր մկանները, կարմիր գույնի գործածումով ամրապնդվում է ձայնավոր հնչյունի գաղափարը:

Առաջադրանք 6.

ա) «Կարդա՛» բառերը:

բ) Ընդգծի՛ր *ա* տառը:

Այս առաջադրանքի կատարման ընթացքում աշակերտը անվանում է նկարներում պատկերված առարկաները՝ միաժամանակ ստեղծելով կարդալու պատրանք: Դրան նպաստում են նաև նկարների տակ տրված բառերի գծապատկերները, որոնք հուշող դեր են կատարում: Առաջադրանքի 2-րդ մասը կատարելիս երեխայի ուշադրությունը կենտրոնացնում ենք *ա* տառի վրա, որի ընթացքում ամրապնդվում են տեսողական պատկերները:

Առաջադրանք 7.

Գուշակի՛ր հանելուկը: Պատասխան բառը սկսվում է *ա* հնչյունով: Այն կարող ես գտնել նաև տրված նկարների մեջ:

Այս առաջադրանքը կատարելիս ուսուցիչը կարող է հանելուկը ներկայացնել ողջ դասարանին: Տրված հանելուկի կռահումը նպաստում է ուսումնասիրվող ա հնչյունը բառասկզբում ճանաչելուն, որն իրականացվում է հետաքրքիր եղանակով՝ առաջադրված նկարները որպես հուշող միջոց օգտագործելով:

Առաջադրանք 8.

Գրիչով /կարմիր մատիտով անցի՛ր *ա, Ա* տառերի վրայով: Տողը շարունակի՛ր ինքնուրույն:

Այս առաջադրանքի նպատակը *ա, Ա* տառերի գրության ամրապնդումն է: Նշենք, որ ուսուցիչը տառի գրուսուցման ընթացքում, բնականաբար, պահպանում է մեթոդիկայում ընդունված քայլաշարը: Սակայն այս առաջադրանքի միջոցով դյուրինացված են տառի գրուսուցման ուղղությամբ կատարվող վարժությունները՝ առաջարկելով որոշակի հենարաններ: Նշենք նաև, որ առաջադրանքում ներկայացված տառաչափը ավելի մեծ է, քան տրված է դասագրքում: Այս առաջադրանքի կատարման ընթացքում ուսուցիչը կարող է նկատի ունենալ տվյալ աշակերտի հնարավորությունները և ինքնուրույն որոշել, թե երեխան քանի՞ տառ կարող է գրել: Հնարավոր է, որ երեխան դեռևս չկարողանա ինքնուրույն շարունակել տողը: Այդ դեպքում առաջարկում ենք չստիպել դա անել. բավարարվել միայն նշագծերի վրայով գրելու վարժությամբ:

Առաջադրանք 9.

Ասա՛ *ա* հնչյունը ձայնավո՞ր է, թե՞ բաղաձայն: Տեղադրի՛ր այն իր տնակում:

Առաջադրանքի նպատակն է ինտերակտիվ եղանակով ամրապնդել ձայնավոր, *բաղաձայն հնչյունների* գաղափարը կարմիր և կապույտ գույների միջոցով:

Առաջադրանք 10.

Անվանի՛ր պատկերված առարկաները: Նշի՛ր /ցո՛ւյց տուր/ այն նկարները, որոնց անվանումներում լսվում է *ու* հնչյունը:

Տե՛ս *առաջադրանք* 1:

Առաջադրանք 11.
Անվանի՛ր պատկերված առարկաները: Գունավորի՛ր այն նկարը, որի անվանման մեջ չի լսվում *ա* հնչյունը:

Այս առաջադրանքն իր բնույթով և հետապնդած նպատակով նման է նախորդին (առաջադրանք 10): Սակայն սրա իրականացման ընթացքում երեխան, կարծես թե, կրկնում է նախորդ շարքից իրեն ծանոթ գործողությունը, այն է՝ կենտրոնանում է *ա* հնչյունի արտասանության և ընկալման վրա, սակայն, իր համար աննկատ, կանգ է առնում ուսումնասիրվող *ու* հնչյունը պարունակող բառի վրա: Առաջադրանքի 2-րդ մասի իրականացումը նպաստում է նաև մատների մանր մկանների զարգացմանը և նախապատրաստում գրելու կարողության ձևավորմանը:

12, 13-րդ առաջադրանքների նպատակն է մի կողմից՝ *ա* և *ու* հնչյունների ընկալումն ու ճանաչումը, բառում ունեցած տեղի որոշումը, դրանց տարբերակման զարգացումը, իսկ մյուս կողմից՝ տառանշանների հետ որոշակի գործողություններ կատարելն ու դրանք մտապահելը:

Առաջադրանքների կատարումը կարող է զարգացնել նաև երեխայի բառապաշարը, վերլուծահամադրական կարողությունները, մտածողությունը:

Առաջադրանք 12.
Ասա՛ *ա* հնչյունով սկսվող աղջկա անուններ:

Առաջադրանք 13.
Ասա՛ *ու* հնչյուն ունեցող կենդանիների անվանումներ:

Առաջադրանք 14 և 15.

Այս առաջադրանքներն իրենց նպատակներով նման են նախորդ՝ 12, 13-րդ առաջադրանքներին: Այս դեպքում երեխան մտային պլանում

պետք է կատարի այն, ինչ նախորդ առաջադրանքներում կատարում էր կոնկրետ գործողությունների իրականացման միջոցով: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք անվանել նկարում պատկերված առարկաները, կատարել բառի հնչյունային վերլուծություն, որոշել համապատասխան հնչյուն-տառի տեղը և հետո միայն տեղադրել անհրաժեշտ վանդակում:

Առաջադրանք 16.

Կարմիր մատիտով գունավորի՛ր *Ռ*ռ մեծատառը:

Տե՛ս առաջադրանք 5:

Առաջադրանք 17.

Տրված մասնիկներից ընտրի՛ր և ստացի՛ր *ռ*ռ փոքրատառը (տե՛ս հավելված 4):

Այս առաջադրանքի նպատակն է որոշակի գործողություններ կատարելու միջոցով երեխայի մտապատկերում ամրապնդել *ռ*ռ տառի պատկերը: Հավելվածում տրված են նաև *Ռ*ռ մեծատառի մասնիկները. եթե ուսուցիչը գտնում է, որ աշակերտը կարող է կազմել նաև *Ռ*ռ մեծատառը, ապա կարող է առաջարկել ստանալ նաև այդ տառը: Եթե երեխան դժվարանա ստանալ պահանջվող տառը, առաջարկում ենք առանձնացնել *ռ*ռ փոքրատառի մասնիկները և դրանցից ստանալ տառապատկերը:

Առաջադրանք 18.

Գրիչով անցի՛ր *ռ, Ռ*ռ տառերի վրայով: Տողը շարունակի՛ր ինքնուրույն:

Տե՛ս առաջադրանք 8-ը, սակայն եթե երեխան դեռևս դժվարանում է գրիչով աշխատել, կարելի է առաջարկել կատարել նշված գործողությունը կարմիր մատիտով:

Նշենք, որ նման առաջադրանք ունեն համարյա բոլոր տառերը, սակայն՝ որոշ առանձնահատկություններով. օրինակ՝ աստիճանաբար պակասում է թույլ եզրագծված տառերի քանակը, մեծանում է երեխաների ինքնուրույնությունը և այլն:

Առաջադրանք 19.

Անվանի՛ր նկարներում պատկերված առարկաները: Վանդակներում գրի՛ր/տեղադրի՛ր (տե՛ս հավելված 5) նկարների անվանումների առաջին տառը:

Այս առաջադրանքի նպատակն է *ա, ու* տառերի գրության ամրապնդումը, սակայն ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ դա իրականացվում է տարբեր գործողություններ կատարելով՝ նկարների դիտում, դրանցում պատկերված առարկաների անվանումների արտասանում, հնչյունային վերլուծության իրականացում, հետո միայն՝ տառի գրառում:

Առաջադրանք 20.

***ու* տառը տեղադրի՛ր իր տնակում:**

Տե՛ս առաջադրանք 9-ը, սակայն այս դեպքում չի պահանջվում տառը տեղադրելուց առաջ որոշել՝ ձայնավո՞ր է, թե՞ բաղաձայն: Եթե երեխան դժվարանա այս պահանջով առաջադրանքը կատարելիս, ուսուցիչը կարող է կրկնել 9-րդ առաջադրանքի պահանջը:

Առաջադրանք 21.

Գունավորի՛ր այն նկարը, որում պատկերված առարկայի անվանումը սկսվում է *ա* հնչյունով: Անվանի՛ր այն:

Տե՛ս առաջադրանք 1-ը:

Առաջադրանք 22.

ա) Անվանի՛ր պատկերված առարկաները (տե՛ս հավելված 7): Կանաչ տնակում հավաքի՛ր այն նկարները, որոնց անվանումները սկսվում են ս հնչյունով, դեղին տնակում այն նկարները, որոնց անվանումները վերջանում են ս հնչյունով:

բ) Հաշվի՛ր՝ յուրաքանչյուր տնակում քանի՛ նկար կա: Գրի՛ր/տեղադրի՛ր թիվը (տե՛ս հավելված 8):

Տե՛ս առաջադրանք 3-ը:

Եթե երեխան դժվարանա, առաջարկում ենք սահմանափակվել պահանջվող հնչյուններով սկսվող առնվազն մեկական նկար առանձնացնելով: Առաջադրանքի 2-րդ մասում միջառարկայական կապ է ստեղծվել մաթեմատիկայի հետ. երեխան գրում կամ տեղադրում է համապատասխան թիվը:

Առաջադրանք 23.

Տրված տառերի շարքում ընդգծի՛ր /ցո՛ւյց տուր *ա*- ն:

Այս առաջադրանքի իրականացումը նպատակ ունի ամրապնդելու անցած տառերի իմացությունը՝ համեմատելով նոր սովորած տառանշանի հետ: Տառերի գունավորումը հուշում է դրանց ձայնավոր կամ բաղաձայն լինելու մասին: Մենք առաջարկում ենք ընդգծել, որը մանր մկանների զարգացման համար է: Սակայն, եթե երեխան դժվարանում է, ապա կարող է նաև մատով ցույց տալ:

Առաջադրանք 24.

Անվանի՛ր նկարներում պատկերված առարկաները: Ընդգծի՛ր *ա* տառը:

Առաջադրանքի նպատակն է. նախ՝ ևս մեկ անգամ երեխայի ուշադրությունը կենտրոնացնել բառում *ա* հնչյունի արտասանությանը և տեղադրությանը, որը կարելի է իրականացնել լրացուցիչ հարցերի միջոցով, օրինակ՝ *ա հնչյունը բառի ո՞ր դիրքում է*:

Առաջադրանքի 2-րդ հատվածի իրականացմամբ երեխայի ուշադրությունը տեղափոխում ենք *ա* հնչյունի տառի վրա, որը երեխան պետք է ընդգծի նկարներին կից տրված բառերի գծապատկերներում: Նկատենք, որ դրանցում առկա է արդեն յուրացրած *ա* տառը, որը կարմիր գույնով է:

Առաջադրանք 25.

Անվանի՛ր նկարներում պատկերված առարկաները: Տեղադրի՛ր *ա* և *ա* տառերը անհրաժեշտ վանդակներում (տե՛ս հավելված 9):

Այս առաջադրանքը նման է նախորդին, սակայն մեծանում է երեխայի ինքնուրույնության չափը: Առաջադրանքը կատարելուն կնպաստի նկարների անվանումների հստակ արտաբերումը և հնչյունային վերլուծությունը: Այդ վերլուծության ընթացքում հատկապես պետք է որոշել *ա* և *ա* հնչյունների տեղերը բառերում, որպեսզի իրականացվող աշխատանքն իմաստավորված լինի: Եթե երեխան դժվարանում է տեղադրել 2 տառերը միաժամանակ, կարելի է առաջարկել տեղադրել միայն մեկը, իսկ մյուսը կտեղադրի կա՛մ կողքին նստած աշակերտը, կա՛մ ուսուցիչը:

Առաջադրանք 26.

Կապույտ մատիտով գունավորի՛ր *Ս, ս* տառերը:

Տե՛ս առաջադրանք 5-ը: Սակայն այստեղ ավելանում է նաև մեծատառը գունավորելու պահանջը: Այս դեպքում ուսուցիչը կարող է ինքը որոշել՝ տվյալ դեպքում ավելացնի՞ այդ պահանջը, թե՞ ոչ:

Առաջադրանք 27.

Տրված մասնիկները միացրո՛ւ և ստացի՛ր ս տառը:

Գրի՛ր առնվազն 2-ը:

Առաջադրանք 28.

Տրված գունավոր գծերի արանքում գրի՛ր *Ս* մեծատառերը (5):

27, 28-րդ առաջադրանքները տառի գրության վարժություններ են, որոնք հնարավորինս գրավիչ են, ունեն հենարան և հոգնեցնող չեն: Այստեղ ևս անհատական մոտեցում կարելի է ցուցաբերել, և յուրաքանչյուր առանձին դեպքում ուսուցիչն ինքնուրույն կարող է որոշել, թե քանի տառ գրի տվյալ աշակերտը:

Առաջադրանք 29.

Ս տառը տեղադրի՛ր իր տնակում:

Տե՛ս առաջադրանք 20-ը:

Առաջադրանք 30.

ա) Գուշակի՛ր հանելուկը: Պատասխանն ընտրի՛ր նկարներից:

բ) Ասա՝ ի՞նչ հնչյունով է սկսվում: Գրի՛ր այդ տառը շրջանի մեջ:

Տե՛ս առաջադրանք 7-ը:

Առաջադրանք 31.

ա) Լսի՛ր շուտասելուկը և կրկնի՛ր:

բ) Ո՞ր հնչյունն է ամենաշատը կրկնվում: Գրի՛ր տառը շրջանների մեջ:

Այս առաջադրանքների իրականացման նպատակը խոսքի արտասանական համակարգի մարզումն է, հատկապես՝ *ս* հնչյունի, որն առավել հաճախ է աղավաղվում: Շուտասելուկը լսելու և կրկնելու միջոցով զարգացնում ենք նաև լսողական ընկալումները: Առաջադրանքի նպատակներից է նաև ոչ սովորական իրավիճակում (օրինակ՝ շրջանի մեջ գրելը) դրդել աշակերտին գրելու ուսումնասիրվող տառը:

Առաջադրանք 32.

ա) «Կարդա՛» բառերը.

բ) Անվանի՛ր տառերը:

Տե՛ս առաջադրանք 6-ը:

Առաջադրանք 33.

Կարդա՛ բառերը: Արտագրի՛ր 2-ական բառ՝ տրված օրինակով:

Այս վարժության համար ընտրվել են 2, 3 տառից կազմված բառեր, որոնք երեխան ոչ միայն պետք է կարդա, այլև գրի: Այս դեպքում ևս ուսուցիչն ինքը կարող է որոշել գրվող բառերի քանակը:

Առաջադրանք 34.

Կարդա՛ տրված նախադասությունը: Արտագրի՛ր այն:

Այս առաջադրանքը հետաքրքիր է նրանով, որ երեխայի համար ամբողջական նախադասություն կարդալու և ընկալելու առաջին փորձն է: Վերջինիս նպաստում է նաև կից տրված նկարը: Մինչ նախադասության ընթերցումը, ուսուցիչը կարող է երեխայի ուշադրությունը հրավիրել նկարի վրա և հարցնել՝ *Ի՞նչ է պատկերված նկարում:*

Առաջադրանք 35.

ա) Անվանի՛ր պատկերված կենդանիները: Գունավորի՛ր այն կենդանիների նկարները, որոնց անվանումներում լսվում է ի հնչյունը:

բ) Ասա՛՝ այդ բառերում *ի*-ն ո՞րերորդ հնչյունն է:

Տե՛ս առաջադրանք 1-ը: Սակայն այս առաջադրանքի 2-րդ հատվածում ավելանում է նաև ուսումնասիրվող հնչյունի տեղի որոշումը: Որոշ դեպքերում կարելի է գծել բառի գծապատկերը, որը կօգնի հնչյունի տեղը որոշելուն: Ուսուցիչը անհրաժեշտության դեպքում կարող է նաև առաջարկել երեխային ասել իրեն ծանոթ

առարկաների անվանումներ, որոնցում *h* հնչյունը կհանդիպի բառի տարբեր դիրքերում:

Առաջադրանք 36.

Տառերի շարքում գտի՛ր և նշի՛ր տողի սկզբում տրված տառը: Անվանի՛ր այն:

Այս առաջադրանքի իրականացման միջոցով նախ՝ երեխայի ուշադրությունը կենտրոնացնում ենք *h, Հ* տառանշանների վրա, մյուս կողմից՝ զարգացնում ենք դիտողականությունը և տեսողական ընկալումը: Դժվարանալու դեպքում առաջադրանքի 2-րդ մասի պահանջը կարելի է չկատարել, քանի որ այս վարժության նպատակը տառապատկերի տեսողական ընկալումն ու մտապահումն է:

Առաջադրանք 37.

Տեղադրի՛ր *h* տառը անհրաժեշտ վանդակներում (տե՛ս հավելված 12):

Այս առաջադրանքը նման է նախկինում ներկայացված մի քանի առաջադրանքների (12, 13), սակայն, ի տարբերություն նշվածների, այստեղ երեխան նախապես չի անվանում նկարներում պատկերված առարկաները: Եթե երեխան դժվարանա, ապա կարելի է առաջարկել նախ՝ անվանել առարկան, ապա՝ կատարել առաջադրվող գործողությունը:

Առաջադրանք 38.

Կարմիր մատիտով գունավորի՛ր *Հ h* տառերը:

Տե՛ս առաջադրանք 26-ը:

Առաջադրանք 39.

***h* տառը տեղադրի՛ր իր տնակում:**

Տե՛ս առաջադրանք 20-ը:

Առաջադրանք 40.

Տրված մասնիկները միացրո՛ւ և ստացի՛ր *ի* փոքրատառը (տե՛ս ավելված 13):

Տե՛ս առաջադրանք 17-ը:

Առաջադրանք 41.

Գրիչով անցի՛ր *ի, Ի* տառերի վրայով: Տողը շարունակի՛ր ինքնուրույն:

Տե՛ս առաջադրանք 8-ը:

Առաջադրանք 42.

Անվանի՛ր նկարներում պատկերված առարկաները: Վանդակներում գրի՛ր /տեղադրի՛ր նկարների անվանումների 2-րդ հնչյունի տառը (տե՛ս հավելված 14-ը):

Այս առաջադրանքի նպատակը հնչյունային վերլուծություն միջոցով ուսումնասիրվող հնչյունի վրա երեխայի ուշադրության կենտրոնացումն է, միևնույն ժամանակ՝ առանձնացրած հնչյունը համապատասխան տառի հետ համադրելու կարողության զարգացումը: Առաջադրանքի նպատակներից է նաև բառապաշարի հարստացումը և խոսքի արտասանական կողմի զարգացումը:

Առաջադրանք 43.

ա) Վանդակներում գտի՛ր *ի* տառի տեղը և գրի՛ր:

բ) «Կարդա՛» ստացված բառերը:

43-րդ առաջադրանքը երեխան հաջողությամբ կիրականացնի, եթե կատարել է նախորդ առաջադրանքը: Այստեղ ևս նա պետք է հնչյունային վերլուծություն կատարի, սակայն մտային պլանում: Եթե երեխան դժվարանա, կարելի է բարձրաձայն արտաբերել բառը, հետո՝ վերլուծել: Առաջադրանքում չենք ընդգծել, սակայն, եթե երեխան դժվարանա գրել *ի* տառը, ապա ուսուցիչը կարող է առաջարկել կտրտված տառերից տեղադրել այն համապատասխան վանդակում:

Բառերի գծապատկերները տրված են նաև վանկային կորերով, որը նախապատրաստելու է կարդալուն:

Առաջադրանքի 2-րդ պահանջն այն աշակերտների համար է, ովքեր կկարողանան: Համենայն դեպս, դրան մեծապես կարող են նպաստել ներկայացված առարկայական նկարները:

Առաջադրանք 44.

ա) «Կարդա՛» բառերը:

բ) Անվանի՛ր տառերը:

Տե՛ս առաջադրանք 6-ը: Առաջադրանքի 2-րդ պահանջը անցածը կրկնելու համար է, որին պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել:

Առաջադրանք 45.

Հավելվածից ընտրի՛ր միևնույն գույնի տառամասնիկները և ստացի՛ր քեզ ծանոթ տառերը: Անվանի՛ր դրանք (տե՛ս հավելված 16-ը):

Այս առաջադրանքն իր բնույթով նման է առաջադրանք 17-ին: Սակայն այստեղ երեխան գույները տարբերակելու միջոցով որոշակի գործողություններ է կատարում և ստանում անհրաժեշտ տառապատկերները: Դրանք տրված են էջի վրա: Առաջադրանքի կատարումն առանձնապես դժվարություն չի ներկայացնում, սակայն այն հետաքրքիր է, ինտերակտիվ և նպաստում է տառապատկերի կայուն մտապահմանը, քանի որ գործողությունները կատարելուց հետո երեխան պետք է անվանի ստացված տառերը:

Առաջադրանք 46.

Անվանի՛ր տառը և գրի՛ր՝ լրացնելով բաց թողած մասնիկը:

Այս առաջադրանքի նպատակն է վերհիշել, կրկնել և ամրապնդել անցած տառանշանները և դրանք համապատասխանեցնել հնչյուններին: Եթե ուսուցիչը գտնում է, որ երեխան կարող է շարունակել տողը, կարող է առաջարկել անել դա:

Առաջադրանք 47.

Վանկերի շարքում գտի՛ր և նշի՛ր տողի սկզբում տրված վանկը: Կարդա՛ այն:

Այս առաջադրանքն իր բնույթով նման է 36-րդին, սակայն այստեղ երեխային առաջարկվում են վանկեր: Վանկային պատկերները ճանաչելը և տեսողությամբ ընկալելը շատ արդյունավետ վարժություն է կարդալու ուսուցման համար: Եթե երեխան դժվարանա կատարել առաջադրանքը, ուսուցիչը կարող է պակասեցնել տողի վրայի վանկերի քանակը՝ թղթի շերտիկներով ծածկելով դրանցից մի քանիսը:

Առաջադրանք 48.

ա) Անվանի՛ր պատկերված առարկաները: Ասա՛՝ ո՞ր հնչյունն է կրկնվում բոլոր բառերում:

բ) Ասա՛՝ այդ բառերում *ր*-ն ո՞ր երրորդ հնչյունն է:

Տե՛ս առաջադրանք 1-ը: Սակայն այն իր բնույթով սա ավելի բարդ է, քանի որ կրկնվող հնչյուններ շատ կան, բայց ոչ բոլոր բառերում: Դժվարանալու դեպքում՝ ուսուցիչը կարող է ինքն ընդգծված արտասանել *ր* հնչյունը: Առաջադրանքի նպատակը երեխայի ուշադրությունն այդ հնչյունի վրա կենտրոնացնելն է:

Առաջադրանք 49.

Տառերի շարքում գտի՛ր և նշի՛ր տողի սկզբում տրված տառը: Անվանի՛ր այն:

Տե՛ս առաջադրանք 36-ը:

Առաջադրանք 50.

Տրված տառերի շարքում ընդգծի՛ր *ր* տառը:

Առաջադրանք 51.

Տրված տառերի շարքում ընդգծի՛ր Ր մեծատառը:

Տե՛ս առաջադրանք 23-ը:

Եթե երեխան դժվարանա գտնել և ընդգծել անհրաժեշտ տառը, առաջարկում ենք վերադառնալ նախորդ վարժությանը:

Առաջադրանք 52.

Կապույտ մատիտով գունավորի՛ր *բ* փոքրատառը, կարմիրով՝ Ի մեծատառը:

Այս առաջադրանքը նման է 26-րդին, սակայն որոշ տարրերի տարբերություն կա. այստեղ տրված են տարբեր տառեր, ընդ որում մեկը ձայնավոր հնչյունի, մյուսը՝ բաղաձայն: Երեխան պետք է նաև այս տարբերակումը կատարի:

Առաջադրանք 53.

***բ* տառը տեղադրի՛ր իր տնակում:**

Տե՛ս առաջադրանք 20-ը:

Առաջադրանք 54.

«Կարդա՛» բառերը: Կապույտով ընդգծի՛ր *բ* տառը:

Տե՛ս առաջադրանք 6-ը:

Սակայն այս առաջադրանքում բառերի գծապատկերները տրված են վանկային կորերով, որը կարդալուն նախապատրաստող արդյունավետ հնար է: Կարելի է նաև երեխայի ուշադրությունը հարցերով կենտրոնացնել դրա վրա: Առաջադրանքի 2-րդ մասում երեխան պետք է կապույտ գույնով ընդգծի ուսումնասիրվող տառը, որը և՛ հետաքրքիր է, և՛ բաղաձայն հնչյունի գաղափարն է ամրապնդում:

Առաջադրանք 55.
Բառերի շարքում գտի՛ր և նշի՛ր տողի սկզբում տրված բառը:
Կարդա՛ այն:

Այս առաջադրանքը նման է 26-րդին, սակայն արդեն միավանկ բառի մակարդակով, որը հիմք է ստեղծում հաջորդ առաջադրանքի կատարման համար: Եթե երեխան դժվարանա գտնել բառը, առաջարկում ենք թղթի շերտով ծածկել որոշ բառեր՝ թողնելով 2-ը կամ 3-ը:

Առաջադրանք 56.
ա) «Կարդա՛» բառերը:
բ) Ընդգծի՛ր քեզ ծանոթ ձայնավորները և անվանի՛ր:

Այս առաջադրանքը նման է 54-րդին, սակայն նպատակը անցած տառերի կրկնությունն է, ինչպես նաև *ձայնավոր, բաղաձայն* հասկացությունների ամրապնդումը: Միևնույն ժամանակ այս առաջադրանքը կարդալու ուսուցման արդյունավետ վարժություն է:

Առաջադրանք 57.
ա) Կարդա՛ տառը, վանկը, բառը նախ տպագիր, ապա՝ ձեռագիր:
բ) Շարունակի՛ր տողը:

Այս առաջադրանքի նպատակը տպագիր և ձեռագիր տառերի համեմատումն ու տարբերակումն է տառերի, վանկերի, բառերի օրինակներով, ինչպես նաև գրելու կարողության զարգացումը:

Առաջադրանք 58.
Կարդա՛ բառերը: Գրի՛ր 2-ական՝ տրված օրինակով:

Տե՛ս առաջադրանք 33-ը:

Առաջադրանք 59.
Կարդա՛ տրված նախադասությունը:

Առաջադրանք 60.

Կարդա՛ տրված նախադասությունը: Արտագրի՛ր այն:

Տե՛ս առաջադրանք 34-ը:

Նշված առաջադրանքներում կարդալու համար առաջարկված նախադասությունների բառերը տրված են վանկային կորերով, որը կնպաստի կարդալու գործընթացին: Դժվարանալու դեպքում ուսուցիչը կարող է առաջարկել երեխային կարդալուց առաջ հաշվել տվյալ նախադասության բառերի քանակը, այնուհետև՝ յուրաքանչյուր բառի վանկերի քանակը և այլն:

Առաջադրանք 61.

ա) Անվանի՛ր պատկերված առարկաները: Նշի՛ր/ցո՛ւյց տուր այն նկարները, որոնց անվանումներում *տ*-ն բառամիջում է:

բ) Ասա՛ *տ* հնչյունով սկսվող/վերջացող բառեր:

Տե՛ս առաջադրանք 1-ը:

Այս առաջադրանքի թե՛ 1-ին և թե՛ 2-րդ մասերն իրականացնելու համար առաջարկում ենք նախապես հնչյունային վերլուծություն կատարել, որը լավ նախավարժանք է հաջորդ քայլերի համար: Առաջադրանքի 2-րդ պահանջը կարելի է առաջարկել՝ հաշվի առնելով տվյալ երեխայի հնարավորությունները:

Առաջադրանք 62.

Անվանի՛ր պատկերված առարկաները: Այդ անվանումների առաջին հնչյունները միացրո՛ւ և ստացի՛ր համեղ մրգի անվանում:

Այս առաջադրանքի նպատակը ևս հնչյունային վերլուծություն կատարելն է, սակայն դրան ավելանում է նաև համադրման գործողությունը, որը նորություն է և կարող է դժվարություն առաջացնել: Այդ նպատակով առաջարկել ենք օրինակներ նկարների տեսքով:

Առաջադրանք 63.

Տառերի շարքում գտի՛ր և նշի՛ր տողի սկզբում տրված տառը: Անվանի՛ր այն:

Տե՛ս առաջադրանք 36-ը:

Առաջադրանք 64.

Տրված տառերի շարքում ընդգծի՛ր *ա* փոքրատառը:

Դժվարանալու դեպքում կրկնել նախորդ վարժությունը:

Առաջադրանք 65.

Տրված տառերի շարքում ընդգծի՛ր *Տ* մեծատառը:

Տե՛ս առաջադրանք 23:

Առաջադրանք 66.

Կապույտ մատիտով գունավորի՛ր *Տ ա* տառերը:

Տե՛ս առաջադրանք 26-ը:

Առաջադրանք 67.

Հավելվածից *ա* տառը տեղադրի՛ր իր տնակում:

Տե՛ս առաջադրանք 20-ը:

Այս առաջադրանքը կարելի է իրականացնել նաև՝ երեխային առաջարկելով անցած տառերից (կտրտված) մի քանիսը: Երեխան դրանցից կընտրի տ տառը և կտեղադրի համապատասխան տնակում:

Առաջադրանք 68.

«Կարդա՛» բառերը: Ընդգծի՛ր *ա* տառը:

Տե՛ս առաջադրանք 6-ը:

Առաջադրանք 69.

Միևնույն գույնի տառերը դի՛ր իրար կողքի այնպես, որ ստանաս բառեր: Կարդա՛ դրանք (տե՛ս հավելված 18-ը):

Այս առաջադրանքը հետաքրքիր է նրանով, որ երեխան գունեղ տառերով որոշակի գործողություններ է կատարում, սակայն այնպես, որ արդյունքում ստանա բառեր, որից հետո ստացված բառերը կարդալը բավական դյուրին կլինի երեխայի համար: Կարդալու համար առաջարկել ենք այբբենարանի էջում առկա միավանկ բառեր: Եթե երեխան դժվարանա առաջադրանքը կատարել, առաջարկում ենք ցույց տալ բառին համապատասխանող նկարը:

Առաջադրանք 70.

Տրված մասնիկներից ստացի՛ր *ա* փոքրատառը (տե՛ս հավելված 19-ը):

Տե՛ս առաջադրանք 17-ը:

Առաջադրանք 71.

Տրված տառերից գտի՛ր և գունավորի՛ր/ցո՛ւյց տուր միայն *ա* փոքրատառը:

Տե՛ս առաջադրանք 26-ը:

Սակայն, ի տարբերություն 26-րդ առաջադրանքի, այստեղ տառերը տրված են խառը դասավորությամբ և ավելի շատ են: Առաջադրանքը նպատակ ունի նաև ամրապնդել անցած տառերի իմացությունը: Ուսուցիչը կարող է առաջարկել երեխային անվանել տառերից որևէ մեկը, երկուսը կամ բոլորը:

Առաջադրանք 72.

Գրիչով անցի՛ր *ա, Տ* տառերի վրայով: Տողը շարունակի՛ր ինքնուրույն:

Տե՛ս առաջադրանք 8-ը:

Առաջադրանք 73.

Բառաշարքերում գտի՛ր և նշի՛ր տողի սկզբում տրված բառը: Կարդա՛ դրանք:

Տե՛ս առաջադրանք 36-ը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը բառի տեսողական պատկերի յուրացումն է: Մի կողմից երեխայի ուշադրությունը կենտրոնացնում ենք բառապատկերների վրա, մյուս կողմից՝ զարգացնում դիտողականությունը և տեսողական ընկալումը: Առաջադրանքի 2-րդ մասի պահանջը, դժվարանալու դեպքում, կարելի է դեռևս չկատարել, քանի որ այս վարժության նպատակը բառապատկերի տեսողական ընկալումն ու դրա մտապահումն է:

Առաջադրանք 74.

ա) «Կարդա՛» բառերը.

բ) Ընդգծի՛ր/ցո՛ւյց տուր *ա* տառը:

Տե՛ս առաջադրանք 56-ը:

Առաջադրանք 75.

ա) Կարդա՛ տառը, վանկը, բառը նախ տպագիր, ապա՝ ձեռագիր:

բ) Շարունակի՛ր տողը:

Տե՛ս առաջադրանք 57-ը:

Առաջադրանք 76.

Անվանի՛ր պատկերված առարկաները: Այդ անվանումների առաջին հնչյունները միացրո՛ւ և ստացի՛ր կենդանու անվանում:

Տե՛ս առաջադրանք 42-ը:

Առաջադրանք 77.

ա) Անվանի՛ր պատկերված առարկաները: Ասա՝ ո՞ր կենդանու անվանման մեջ կա 2 *կ*:

բ) Ասա՝ այդ բառերում *կ*-ն ո՞րերորդ հնչյուն/հնչյուններն է/են:

Տե՛ս առաջադրանք 1-ը:

Առաջադրանք 78.

Տրված մասնիկներից ընտրի՛ր և ստացի՛ր Կ մեծատառը (տե՛ս հավելված 20-ը):

Տե՛ս առաջադրանք 17-ը:

Առաջադրանք 79.

Տառերի շարքում գտի՛ր և նշի՛ր տողի սկզբում տրված տառը: Անվանի՛ր այն:

Տե՛ս առաջադրանք 36-ը:

Առաջադրանք 80.

Տրված տառերի շարքում ընդգծի՛ր *կ* փոքրատառը:

Առաջադրանք 81.

Տրված տառերի շարքում ընդգծի՛ր Կ մեծատառը:

Տե՛ս առաջադրանք 23-ը:

Առաջադրանք 82.

ա) Կապույտ մատիտով գունավորի՛ր Կ մեծատառը:

բ) Տառերի շարքում գտի՛ր *կ* փոքրատառը և նշի՛ր/ցո՛ւյց տուր:

Տե՛ս առաջադրանք 26-ը:

Առաջադրանք 83.

Հավելված 21-ից *հ* և *կ* տառերը տեղադրի՛ր իրենց տնակներում:

Տե՛ս առաջադրանք 20-ը:

Այս առաջադրանքը, շատ նման է 20-րդին, սակայն այստեղ առաջադրվում է 2 տառ. մեկը՝ ձայնավոր, մյուսը բաղաձայն: Այսինքն՝ առաջադրանքը որոշակի բարդություն ունի և երեխայից պահանջում է տարբերակել ձայնավոր և բաղաձայն հնչյունների տառերը: Առաջադրանքի իրականացումը զարգացնում է նաև մտածողությունը:

Առաջադրանք 84.

Բառաշարքերում գտի՛ր և նշի՛ր տողի սկզբում տրված բառը: Կարդա՛դրանք:

Տե՛ս առաջադրանք 36-ը:

Առաջադրանք 85.

Միևնույն գույնի տառերը դասավորի՛ր մեծից փոքր հերթականությամբ: Կարդա՛ ստացված բառերը (տե՛ս հավելված 22):

Այս առաջադրանքը նման է 69-րդին, սակայն գույնի հատկանիշին ավելանում է նաև չափի հատկանիշը, որը դյուրինացնում է տառերը բառում համադրելու գործողությունը և նպաստում կարդալուն: Ինչ խոսք, առաջին հայացքից թվում է, թե այս առաջադրանքը ավելի է հեշտացնում կարդալու գործընթացը, սակայն չպետք է մոռանալ, որ մտավոր խնդիրներ ունեցող երեխան 2 հատկանիշը միաժամանակ դժվար է ընկալում: Դրա համար մենք նախ ձևակերպել ենք 69-րդ առաջադրանքը, հետո՝ 85-ը:

Առաջադրանք 86.

ա) «Կարդա՛» բառերը.

բ) Ընդգծի՛ր/գո՛ւյց տուր *կ* տառը:

Տե՛ս առաջադրանք 54-ը:

Առաջադրանք 88.

Վանդակներում գրի՛ր *կ* տառը: Կարդա՛ ստացված բառերը:

Այս առաջադրանքի նպատակն առաջին հերթին տառը գրելու կարողության զարգացումն է: Առաջադրանքի մյուս կարևոր խնդիրը կարդալու կարողության զարգացումն է, որին կնպաստեն թե՛ առարկայական նկարները և թե՛ վանկային կորերը: Առաջադրանքը կատարելիս կարելի է ուղղորդող հարցեր առաջադրել տվյալ բառում *կ* տառի տեղի, բառում տառերի քանակի վերաբերյալ և այլն:

Առաջադրանք 89.

ա) Կարդա՛ տառը, վանկը, բառերը նախ տպագիր, ապա՝ ձեռագիր:

բ) Շարունակի՛ր այն տողը, որում կա *կ* տառը:

Այս առաջադրանքը նման է 57-րդին, սակայն այս դեպքում երեխան պետք է որոշակի պայմանի՝ *կ* տառի առկայության դեպքում արտագրի բառը, որը մտավոր աշխատանք է պահանջում:

Առաջադրանք 90.

Կարդա՛ բառերը: Արտագրի՛ր միայն *կ* տառ ունեցող բառերը:

Առաջին հայացքից թվում է, թե այս առաջադրանքը կրկնում է նախորդին: Սակայն նշենք, որ նախորդի դեպքում երեխան տառանշանով պետք է առաջնորդվեր (տեսողական ընկալում), իսկ այս դեպքում՝ նախ պետք է կարդա բառը, լսողությամբ ընկալի *կ* հնչյունը, այնուհետև՝ արտագրի անհրաժեշտ բառը:

Առաջադրանք 91.

Անվանի՛ր պատկերված առարկաները: Այդ անվանումների առաջին հնչյունները միացրո՛ւ և ստացի՛ր աղջկա անուն:

Տե՛ս առաջադրանք 42-ը:

Առաջադրանք 92.

ա) Անվանի՛ր առարկաները: Նշի՛ր այն նկարը, որի անվանման մեջ լսվում է *և* հնչյունը:

բ) Ասա՛՝ այդ բառերում *և*-ն ո՞րերորդ հնչյունն է:

Եթե երեխան դժվարանա որոշել *և* հնչյունի տեղը բառում, ուսուցիչը կարող է առաջարկել բառի գծապատկերը:

Տե՛ս առաջադրանք 35-ը:

Առաջադրանք 93.

Տրված մասնիկներից ընտրի՛ր և ստացի՛ր Ն մեծատառը (տե՛ս հավելված 23-ը):

Տե՛ս առաջադրանք 17-ը:

Առաջադրանք 94.

Տառերի շարքում գտի՛ր և նշի՛ր տողի սկզբում տրված տառը: Անվանի՛ր այն:

Տե՛ս առաջադրանք 36-ը:

Առաջադրանք 95.

Տրված տառերի շարքում ընդգծի՛ր *և* փոքրատառերը:

Տե՛ս առաջադրանք 23-ը:

Սակայն այս առաջադրանքում պահանջը մի փոքր բարդանում է: Երեխան փոքրատառերի շարքում պետք է գտնի և նշի ոչ թե 1, այլ 2 *և* տառ: Դժվարանալու դեպքում՝ ուսուցիչը կարող է մեկ անգամ ևս կարճ ժամանակով ցույց տալ տառապատկերը:

Առաջադրանք 96.

Տրված տառերի շարքում ընդգծի՛ր Ն մեծատառը:

Այս առաջադրանքի նպատակը Ն մեծատառի յուրացման ամրապնդումն է, ինչպես նաև տարբերակումը: Դրա համար ընտրվել են

այնպիսի մեծատառեր, որոնք տեղադրությամբ և ձևով նման են Ն մեծատառին:

Առաջադրանք 97.
Կապույտ մատիտով գունավորի՛ր *ն* փոքրատառը:
Տե՛ս առաջադրանք 52-ը:

Առաջադրանք 98.
***ն* տառը տեղադրի՛ր իր տնակում:**
Տե՛ս առաջադրանք 20-ը:

Առաջադրանք 99.
Անվանի՛ր պատկերված առարկաները: Հավելված 25-ից ընտրի՛ր և քառակուսու մեջ տեղադրի՛ր այն տառը, որի հնչյունով սկսվում են նկարների անվանումները:
Այս առաջադրանքի նպատակը հնչյունային վերլուծություն կատարելու, ինչպես նաև առանձնացրած հնչյունը և տառը համադրելու կարողությունների զարգացումն է:

Առաջադրանք 100.
Բառաշարքերում գտի՛ր և նշի՛ր տողի սկզբում տրված բառը: Կարդա՛դրանք:
Առաջադրանքի իրականացման նպատակը ամբողջական բառապատկերների տեսողական ընկալումն է: Առաջին մասում երեխան պետք է նմանեցնելով ճանաչի տողի սկզբում տրված բառի պատկերը: Սա տվյալ առաջադրանքի հիմնական նպատակն է: 2-րդ հատվածում առաջարկում ենք կարդալ առանձնացրած բառը, սակայն, դժվարանալու դեպքում, ուսուցիչը կարող է ընթերցել, իսկ երեխան՝ կրկնել տվյալ բառը:

Առաջադրանք 101.

Միևնույն գույնի տառերը դասավորի՛ր մեծից փոքր հերթականությամբ: Կարդա՛ ստացված բառերը (տե՛ս հավելված 26-ը):

Տե՛ս առաջադրանք 85-ը:

Առաջադրանք 102.

Անվանի՛ր տրված տառերը: Գունավորի՛ր միայն *Ն* մեծատառը:

Ի տարբերություն նախորդ նմանօրինակ առաջադրանքների, այս առաջադրանքում տառերը տրված են թեքությամբ: Իսկ նշված տառը գունավորելուց առաջ ուսուցիչը պետք է հարցնի աշակերտին՝ «Ի՞նչ գույնով պետք է գունավորել բաղաձայնը»: Սա ձայնավորի և բաղաձայնի գաղափարն ամրապնդելու նպատակ ունի:

Առաջադրանք 103.

ա) Տրված նկարների տակ հավելվածից տեղադրի՛ր համապատասխան բառերը (տե՛ս հավելված 27-ը):

բ) Ընդգծի՛ր *ն* տառը:

Առաջադրանքի նպատակն է տեսողական ընկալման միջոցով ամրապնդել բառի գրության պատկերը՝ օգտագործելով համապատասխան նկարները: Միևնույն ժամանակ, երեխան կատարում է բառի տառային վերլուծություն, քանի որ առաջադրանքի 2-րդ պահանջը ուսումնասիրվող տառի ընդգծումն է:

Առաջադրանք 104.

Գրիչով անցի՛ր *ն Ն* տառերի վրայով: Տողը շարունակի՛ր ինքնուրույն:

Տե՛ս առաջադրանք 18-ը:

Առաջադրանք 105.

Անվանի՛ր տառը և գրի՛ր՝ լրացնելով բաց թողած մասնիկը:

Տե՛ս առաջադրանք 46-ը:

Առաջադրանք 106.

Տրված վանդակներում ավելացրո՛ւ *և* տառը և կարդա ստացված բառերը:

Տե՛ս առաջադրանք 88-ը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը *և* տառի գրության ամրապնդումն է, սակայն երեխան հաճույքով է կարդում իր ստեղծած բառը: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ առաջարկել ենք նաև կարդալ բառերը: Կարդալուն նպաստելու են համապատասխան նկարների առկայությունը և վանկային կորերը: Եթե երեխան դժվարանա կարդալիս, ապա կարելի է կարդալ միայն միավանկ բառերը կամ էլ սահմանափակվել պահանջվող տառը գրելով:

Առաջադրանք 107.

Կարդա՛ բառերը: Գրի՛ր միայն *և* տառն ունեցող բառերը:

Տե՛ս առաջադրանք 90-ը:

Այս առաջադրանքի իրականացման ընթացքում երեխան ոչ միայն պետք է գրի, այլև որոշի, թե ո՛ր բառերը պետք է գրի: Դրա համար առաջարկում ենք նախապես հնչյունային վերլուծության ենթարկել բոլոր բառերը, հետո գրել:

Առաջադրանք 108. Կարդա՛ նախադասությունը և արտագրի՛ր:

Տե՛ս առաջադրանք 34-ը:

Առաջադրանք 109.

Անվանի՛ր պատկերված առարկաները: Նշի՛ր այն նկարները, որոնց անվանման մեջ *լ*-տառը բառասկզբում է:

Տե՛ս առաջադրանք 35-ը:

Առաջադրանք 110.

Անվանի՛ր պատկերված առարկաները: Վանդակներում գրի՛ր այդ անվանումների առաջին տառերը և կստանաս բառ: Կարդա՛ այն:

Այս առաջադրանքը նման է 62-րդին, սակայն այստեղ պահանջվում է առանձնացնել ոչ թե հնչյունները, այլ պատկերների անվանումների առաջին տառերը: Ավելանում է նաև գրելու գործողությունը. երեխան, հետաքրքրաշարժ առաջադրանք կատարելով, ստանում է բառի գրապատկերը: Առաջադրանքն իր նպատակին կծառայի, եթե երեխան նաև կարդա ստացված բառը:

Առաջադրանք 111.

Տրված մասնիկներից ստացի՛ր *լ* փոքրատառը (տե՛ս հավելված 28-ը):

Տե՛ս առաջադրանք 17-ը:

Առաջադրանք 112.

Տառերի շարքում գտի՛ր և նշի՛ր տողի սկզբում տրված տառը: Անվանի՛ր այն:

Տե՛ս առաջադրանք 36-ը:

Առաջադրանք 113.

Տրված տառերի շարքում ընդգծի՛ր *լ* փոքրատառերը:

Առաջադրանք 114.

Տրված տառերի շարքում ընդգծի՛ր *Լ* մեծատառը:

Տե՛ս առաջադրանք 96-ը:

Առաջադրանք 115.

Կապույտ մատիտով գունավորի՛ր *Լ* մեծատառը:

Տե՛ս առաջադրանք 26-ը:

Առաջադրանք 116.

Լ տառը տեղադրի՛ր իր տնակում:

Տե՛ս առաջադրանք 20-ը:

Առաջադրանք 117.

Բառաշարքերում գտի՛ր և նշի՛ր տողի սկզբում տրված բառը: Կարդա՛ դրանք:

Տե՛ս առաջադրանք 36-ը:

Առաջադրանք 118.

Միևնույն գույնի տառերը դասավորի՛ր մեծից փոքր հերթականությամբ: Կարդա՛ ստացված բառերը (տե՛ս հավելված 30-ը):

Տե՛ս առաջադրանք 85-ը:

Առաջադրանք 119.

ա) Տրված նկարների տակ հավելվածից տեղադրի՛ր համապատասխան բառերը (տե՛ս հավելված 31-ը):

բ) Ընդգծի՛ր Լ տառը:

Տե՛ս առաջադրանք 103-ը:

Առաջադրանք 120.

Գրիչով անցի՛ր Լ Հ տառերի վրայով: Տողը շարունակի՛ր ինքնուրույն:

Տե՛ս առաջադրանք 18-ը:

Առաջադրանք 121.

Անվանի՛ր տառը և գրի՛ր՝ լրացնելով բաց թողած մասնիկը:

Տե՛ս առաջադրանք 46-ը:

Առաջադրանք 122.

Տրված վանկերին ավելացրո՛ւ համապատասխան գույն ունեցող վանկը և կարդա՛ ստացված բառերը (տե՛ս հավելված 32):

Այս առաջադրանքի նպատակը բառում վանկերի համադրման կարողության զարգացումն է, որը խիստ անհրաժեշտ է բազմավանկ բառերի ընթերցման համար: Առաջադրանքն իրականացնելիս երեխան կարծես թե խաղում է՝ համադրելով գույները, արդյունքում հետաքրքրություն է առաջանում նաև կարդալու իր իսկ կողմից կազմած գունագեղ բառերը:

Առաջադրանք 123.

Կարդա՛ բառերը: Գրի՛ր միայն այն բառերը, որոնցում կա *լ* տառը:

Տե՛ս առաջադրանք 90-ը:

Առաջադրանք 124.

ա) Լսի՛ր/կարդա՛ շուտասելուկը:

բ) Ընդգծի՛ր *լ* տառը:

Տե՛ս առաջադրանք 31-ը:

Առաջադրանք 125.

ա) Անվանի՛ր նկարներում պատկերված առարկաները: Գունավորի՛ր այն նկարը, որի անվանման մեջ 2 *մ* հնչյուն ես լսում:

բ) Նշի՛ր այն նկարը, որի անվանման մեջ *մ* հնչյունը բառավերջում է:

Տե՛ս առաջադրանք 77-ը:

Առաջադրանքի 2-րդ մասն իրականացնելիս երեխան կարող է դժվարանալ, դրա համար առաջարկում ենք բառերը նախ՝ ենթարկել հնչյունային վերլուծության, որոշել *մ* հնչյունի տեղը բոլոր նկարների անվանումներում, հետո՝ կատարել առաջադրանքը:

Առաջադրանք 126.

Տառերի շարքում գտի՛ր և նշի՛ր տողի սկզբում տրված տառերը: Հաշվի՛ր և գրի՛ր/տեղադրի՛ր թիվը (տե՛ս հավելված 33-ը):

Այս առաջադրանքը նման է 36-րդին, սակայն այս դեպքում առաջարկվում է նաև հաշվել ընդգծված տառերի քանակը և նշել թիվը (գրել կամ տեղադրել)՝ ստեղծելով միջառարկայական կապ մաթեմատիկայի հետ:

Առաջադրանք 127.

Տրված տառերի շարքում կապույտ մատիտով ընդգծի՛ր *ա* փոքրատառը: Ասա՛ *ա*-ն ձայնավո՞ր է, թե՞ բաղաձայն:

Առաջադրանք 128.

Տրված տառերի շարքում ընդգծի՛ր *Մ* մեծատառը:

Տե՛ս առաջադրանք 96-ը:

Այս առաջադրանքում նորությունն այն է, որ տառերը տրված են ոչ թե տպագիր, այլ ձեռագիր:

Առաջադրանք 129.

Կապույտ մատիտով գունավորի՛ր *Մ* մեծատառը, կարմիրով՝ *հ* փոքրատառը:

Տե՛ս առաջադրանք 52-ը:

Առաջադրանք 130.

Ընդգծի՛ր *ա* տառը:

Այս առաջադրանքի նպատակն է երեխայի ուշադրությունը կենտրոնացնել հատկապես ուսումնասիրվող **ա** տառի վրա: Սակայն, միևնույն ժամանակ, անուղղակի կերպով երեխան «նկատում է» նաև գրված բառը, որը ներկայացված է վանկային կորերով: Պայմանավորված երեխայի հնարավորություններով՝ ուսուցիչը կարող է նաև

առաջարկել կարդալ տրված բառերից մի քանիսը (երեխայի ընտրությամբ), կամ՝ բոլորը:

Առաջադրանք 131.

Համապատասխան բառը գծով միացրո՛ւ տրված նկարին: Կարդա՛ դրանք:

Այս առաջադրանքը, ընդհանուր առմամբ, նման է 54-րդին, սակայն բառերը տրված են ձեռագիր, իսկ երեխան բառի և նկարի համապատասխանեցումը կատարում է գծելու գործողության միջոցով, որը ևս նպաստում է մանր մկանների զարգացմանը: Բացի այդ, բառերը ներկայացված են վանկային կորերով, որը կարդալու վարժության համար է:

Առաջադրանք 132.

Գրիչով անցի՛ր *ա Ա* տառերի վրայով: Տողը շարունակի՛ր ինքնուրույն:

Տե՛ս առաջադրանք 18-ը:

Առաջադրանք 133.

Տեղադրի՛ր *ա* տառը անհրաժեշտ վանդակներում: Կարդա՛ ստացված բառերը:

Տե՛ս առաջադրանք 88-ը:

Առաջադրանք 134.

Բառերի շարքում գտի՛ր և ընդգծի՛ր տողի սկզբում տրված վանկը:

Տե՛ս առաջադրանք 36-ը:

Այս առաջադրանքի նպատակը բառում վանկը ճանաչելն ու վանկային վերլուծություն կատարելու կարողության զարգացումն է: Նմանօրինակ առաջադրանքներից տարբերվում է նրանով, որ երեխան պետք է կարողանա համապատասխան վանկը գտնել բառի մեջ:

Դժվարանալու դեպքում ուսուցիչը կարող է առաջարկված բառաշարքում թողնել միայն պահանջվող վանկն ունեցող բառերը:

Առաջադրանք 135.

Կատարի՛ր թվաբանական գործողությունը, գրի՛ր ստացված բառը և կարդա՛:

Այս առաջադրանքի նպատակը ոչ միօրինակ եղանակով կարդալու ուսուցումն է: Մաթեմատիկայից իրեն ծանոթ գործողություններ կատարելով՝ երեխան համադրում է վանկերը և ստանում բառեր: Ցանկալի է, որ երեխան նաև կարդա նման հետաքրքիր եղանակով ստացած բառը:

Առաջադրանք 136.

Մեծից փոքր դասավորի՛ր բառերը, կստանաս նախադասություն: Կարդա՛ այն:

Առաջադրանքի կատարումը հետաքրքիր է երեխաների համար, միևնույն ժամանակ ամրապնդում է չափի գաղափարը:

Առաջադրանք 137.

Կարդա՛ մարդկանց անունները: Աղջկա անունները գծով միացրո՛ւ աղջկա պատկերին, տղայինը՝ տղայի:

Առաջադրանքի պահանջը հետաքրքիր է և երեխային մղում է կատարելու այն: Միևնույն ժամանակ երեխան կարդալու վարժություն է կատարում:

Առաջադրանք 138.

Անվանի՛ր հավելված 36-ի նկարները: Գծի ձախ կողմում դասավորի՛ր ն-ով վերջացող անվանումներով նկարները, աջում՝ մ-ով:

Այս առաջադրանքի նպատակը և՛ հնչյունային վերլուծություն կատարելու կարողության զարգացումն է, երեխայի ուշադրությունն

ուսումնասիրվող հնչյունի վրա կենտրոնացնելը, և՛ տարածական կողմնորոշման զարգացումը, մասնավորապես՝ աջի և ձախի:

Առաջադրանք 139.

Տրված բառերում գծիկի վրա ավելացրու՛ *մ* կամ *ն* տառերը, ստացի՛ր բառեր: Կարդա՛ դրանք:

Այս առաջադրանքի նպատակն է *մ, ն* հնչյունների և դրանց տառերի կրկնությունն ու տարբերակումը բառերում: Որպես օգնող միջոց՝ ընթերցվող բառերին կից առաջարկել ենք համապատասխան նկարներ: Կարևոր հանգամանք է նաև նշված տառերի գրառումը, որը գրելու յուրօրինակ վարժություն է:

Առաջադրանք 140.

ա) Հավելված 37-ից ընտրի՛ր միայն այն նկարները, որոնց անվանումներում լսվում է *պ* հնչյունը:

բ) Դասավորի՛ր ընտրված նկարները 3 շարքով՝ *պ*-ն բառասկզբում, բառամիջում և բառավերջում:

Տե՛ս առաջադրանք 22-ը:

Այս առաջադրանքը իրականացնելու համար առաջարկում ենք նախ՝ անվանել պատկերները, կատարել հնչյունային վերլուծություն, որը երեխային կնախապատրաստի առաջադրանքի 2-րդ մասի իրականացմանը: Եթե երեխան դժվարանա, կարելի է առաջարկել առանձնացնել միայն *պ* հնչյունով սկսվող կամ վերջացող անվանումները: Մեկ այլ դեպքում ուսուցիչը/աշակերտը կարող է յուրաքանչյուր շարքում տեղադրել նկարի՝ գոնե մեկ օրինակ:

Առաջադրանք 141.

Տառերի շարքում գտի՛ր և նշի՛ր տողի սկզբում տրված տառերը: Հաշվի՛ր և գրի՛ր դրանց թիվը տողի վերջում:

Տե՛ս առաջադրանք 126-ը:

Այս առաջադրանքում նորությունն այն է, որ տառերը տրված են ձեռագիր:

Առաջադրանք 142.

Հավելված 38-ում տրված մասնիկներից ընտրի՛ր և ստացի՛ր *պ* փոքրատառը:

Տե՛ս առաջադրանք 40-ը:

Առաջադրանք 143.

Ընդգծի՛ր *պ* տառը:

Տե՛ս առաջադրանք 130-ը:

Առաջադրանք 144.

Գրիչով անցի՛ր *պ Պ* տառերի վրայով: Տողը շարունակի՛ր ինքնուրույն:

Տե՛ս առաջադրանք 18-ը:

Առաջադրանք 145.

Տեղադրի՛ր (հավելված 39-ից) *պ* տառը անհրաժեշտ վանդակներում: Կարդա՛ ստացված բառերը:

Տե՛ս առաջադրանք 133-ը:

Առաջադրանք 146.

Բառերի շարքում գտի՛ր և ընդգծի՛ր տողի սկզբում տրված վանկը, բառը:

Տե՛ս առաջադրանք 134-ը:

Սակայն այստեղ ավելանում է բառը գտնելու պահանջը, որը է՛լ ավելի հետաքրքիր է դարձնում աշխատանքը, քանի որ բառը իմաստ է արտահայտում: Եթե երեխան դժվարանա առաջադրանքը կատարելիս, կարելի է թողնել միայն վանկը գտնելու պահանջը:

Առաջադրանք 147.

Կատարի՛ր թվաբանական գործողությունը, գրի՛ր ստացված բառը և կարդա՛:

Տե՛ս առաջադրանք 135-ը:

Առաջադրանք 148.

Մեծից փոքր դասավորի՛ր բառերը (հավելված 40), կստանաս նախադասություն: Կարդա՛ այն:

Տե՛ս առաջադրանք 126-ը:

Առաջադրանք 149.

Գրի՛ր նկարում պատկերված թռչունի անվանումը 3 անգամ:

Այս առաջադրանքի նպատակն է չպարտադրող պայմաններում գրելու վարժություն կատարել՝ զարգացնելով երեխայի գրելու կարողությունները: Հնարավոր է, որ տվյալ երեխայի համար առաջարկվի մեկ անգամ գրել նշված բառը, հնարավոր է՝ հինգ: Եթե երեխան դժվարանում է կողմնորոշվել, թե ի՞նչ է պատկերված նկարում, կարելի է հուշել՝ հենվելով ուսումնասիրվող հնչյունի վրա, օրինակ՝ «Այդ թռչունի անվանման վերջին հնչյունը *պ* է», կամ «Այդ թռչունի անվանումը կազմված է 5 հնչյունից» և այլն:

Առաջադրանք 150.

Գուշակի՛ր հանելուկը: Ասա՛՝ ի՞նչ հնչյունով է սկսվում այդ բառը:

Այս առաջադրանքում հնչյունի առանձնացման միջոց ենք ընտրել պարզ հանելուկ, որի համար հուշում է հանդիսանում հանելուկի

հանգը՝ *տուն-շուն:* Սակայն, այնուամենայնիվ, եթե երեխան դժվարանա գուշակել պատասխանը, կարելի է այլ հուշումներ տալ, օրինակ՝ «Պատասխան բառը կազմված է 3 հնչյունից:» կամ ցուցադրել շան նկար, դիմել ընկերոջ օգնությանը:

Առաջադրանք 151.

Լսի՛ր և կրկնի՛ր շուտասելուկը: Ասա՝ ո՞ր հնչյունն ամենաշատը կրկնվեց:

Տե՛ս առաջադրանք 31-ը:

Սակայն այս առաջադրանքը կատարելիս երեխան նաև պետք է որոշի կրկնվող հնչյունը և արտաբերի այն:

Առաջադրանք 152.

Ձեռագիր տառերի շարքում գտի՛ր և նշի՛ր տողի սկզբում տրված տառերը:

Հաշվի՛ր և գրի՛ր դրանց թիվը:

Տե՛ս առաջադրանք 141-ը:

Առաջադրանք 153.

Հավելված 41-ում տրված տառերից ընտրի՛ր *շ* փոքրատառը և *Շ* մեծատառը:

Այս առաջադրանքի նպատակը ուսումնասիրվող տառանշանի ընկալումն ու յուրացումն է, սակայն, ի տարբերություն նախորդ նմանօրինակ առաջադրանքների, այստեղ երեխան պետք է նորածանոթ տառանշանն առանձնացնի իրեն արդեն ծանոթ տառերի շարքից, որի օրինակը տրված է տետրում: Առաջադրանքի նպատակներից է նաև անցած տառերի կրկնությունը, մեծատառի և փոքրատառի տարբերակումը: Եթե երեխան կարող է, ապա կարելի է փակել տետրում տրված օրինակը և առաջարկել առաջադրանքի պահանջը կատարել առանց տեսողական հենարանի:

Առաջադրանք 154.

Կապույտ մատիտով ընդգծի՛ր *2* տառը: Կարդա՛ ասացվածքը:

Այս առաջադրանքը առկա է նաև գործող այբբենարաններից մեկում: Սակայն տվյալ դեպքում առաջարկում ենք երեխային սկզբում այլ աշխատանք կատարել. կապույտ մատիտով ընդգծել ուսումնասիրվող տառը, որի ընթացքում երեխան ակամա անցնում է տառերի վրայով, ամրապնդում բաղաձայնի գաղափարը, հետո՝ կարդում այն: Ընդ որում, կարդալը դյուրինացնելու նպատակով՝ բառերը տրված են վանկային կորերով:

Առաջադրանք 155.

ա) Տրված նկարների տակ հավելված 42-ից տեղադրի՛ր համապատասխան բառերը:

բ) Ընդգծի՛ր *2* տառը և կարդա՛ բառերը:

Տե՛ս առաջադրանք 103-ը:

Առաջադրանք 156.

Գրիչով անցի՛ր *2 Շ* տառերի վրայով: Տողը շարունակի՛ր ինքնուրույն:

Տե՛ս առաջադրանք 18-ը:

Առաջադրանք 157.

Տեղադրի՛ր (հավելված 43-ից) *2* տառը անհրաժեշտ վանդակներում: Կարդա՛ ստացված բառերը:

Տե՛ս առաջադրանք 133-ը:

Առաջադրանք 158.

Բառերի շարքում գտի՛ր և ընդգծի՛ր տողի սկզբում տրված վանկը, բառերը:

Տե՛ս առաջադրանք 146-ը:

Առաջադրանք 159.

Հավելված 44-ից ընտրի՛ր միևնույն գույնն ունեցող վանկերը և միացրո՛ւ այնպես, որ ստանաս բառեր: Կարդա՛ ստացված բառերը:

Այս առաջադրանքը նման է 122-րդին, սակայն այս դեպքում երեխան ինքը պետք է որոշի վանկերի հերթականությունը բառերը կազմելիս (դրանք տրված են միևնույն գույնով): Այս առումով առաջադրանքը կարող է մի փոքր բարդ լինել ԿԱՊԿ ունեցող երեխայի համար: Ուսուցիչը կարող է օգնել՝ հուշելով կամ տեղադրելով բառի առաջին վանկը: Որոշ դեպքերում կարելի է ցույց տալ համապատասխան նկարը:

Առաջադրանք 160.

Բառաշարքերից դո՛ւրս գրիր միայն *2* տառը ունեցող բառերը:

Առաջադրանքի առաջին շարքում տրված են միավանկ բառեր, երկրորդում՝ երկվանկ: Նպատակն է երեխայի ուշադրությունը մեկ անգամ ևս կենտրոնացնել ուսումնասիրվող տառի վրա, միևնույն ժամանակ զարգացնել գրելու կարողությունը: Իսկ առաջադրանքի պահանջը ձևակերպված է այնպես, որ բացառվի մեխանիկական աշխատանքը: Գրելուց առաջ (հետո) ուսուցիչը կարող է առաջարկել նաև կարդալ տրված բառերը, սակայն այդ դեպքում ցանկալի է երկվանկ բառերի տակ մատիտով վանկային կորեր ավելացնել:

Առաջադրանք 161.

Կարդա՛ շուտասելուկը: Ասա՛/գրի՛ր այն բառերը, որոնցում լսվում է *2* հնչյունը:

Այս առաջադրանքում առաջարկել ենք կարդալ շուտասելուկը, որի համար էլ տրված են վանկային կորերը: Սակայն, եթե երեխան դժվարանա ընթերցել, կարելի է առաջարկել կրկնել ընկերոջ կամ ուսուցչի ընթերցածը: Առաջադրանքի 2-րդ մասում երեխան պետք է գրի, ընդ որում, ոչ թե արտագրելով, այլ լսողությամբ ընկալելով և

հնչյունային վերլուծություն կատարելով: Եթե երեխան դժվարանում է գրել ինքնուրույն, կարելի է առաջարկել արտագրել կամ միան արտասանել *շ* հնչյուն պարունակող բառերը:

Առաջադրանք 162.

ա) Անվանի՛ր պատկերված կենդանիներին: Նշի՛ր այն նկարները, որոնց անվանումները սկսվում են ձայնավորով:

բ) Գունավորի՛ր այն կենդանու նկարը, որի անվանումը սկսվում է *է* հնչյունով:

Այս առաջադրանքը, ինչպես նախորդ մի շարք առաջադրանքներ, ուսումնասիրվող հնչյունը բառից առանձնացնելու, հնչյունային վերլուծություն կատարելու նպատակ ունի: Սակայն այստեղ նորությունն այն է, որ շեշտադրվում է ձայնավոր հնչյուններն առանձնացնելու պահանջը, ինչը նախապատրաստում է ուսումնասիրվող *է* ձայնավորի ընկալմանը: Առաջադրանքը կատարելուց առաջ կարելի է վերհիշել հայերենի ձայնավոր հնչյունները: Դա կարելի է իրականացնել դասարանի մյուս աշակերտների օգնությամբ՝ նրանց էլ մասնակից դարձնելով աշխատանքին:

Առաջադրանք 163.

Ձայնավորների շարքում գտի՛ր և նշի՛ր տողի սկզբում տրված տառերը: Հաշվի՛ր և գրի՛ր դրանց թիվը:

Տե՛ս առաջադրանք 141-ը:

Առաջարկում ենք *է է* տառերն ընդգծել կարմիր գույնով՝ ձայնավորի գաղափարը շեշտելու համար:

Առաջադրանք 164.

Հավելված 45-ում տրված տառերից ընտրի՛ր և փակցրո՛ւ *է* փոքրատառը և *Է* մեծատառը:

Տե՛ս առաջադրանք 141-ը:

Առաջադրանք 165.

Տրված բառերում կարմիր մատիտով ընդգծի՛ր *է* փոքրատառը և *Է* մեծատառը:

Այս առաջադրանքի նպատակը բառում ուսումնասիրվող տառի վրա մեկ անգամ ևս երեխայի ուշադրությունը կենտրոնացնելն է: Առաջադրանքի պահանջը չի նախատեսում բառերի ընթերցում, սակայն ուսուցիչը կարող է նաև այդ պահանջը ավելացնել: Այդ դեպքում առաջարկում ենք երկվանկ բառերը նշել վանկային կորերով:

Առաջադրանքում ընդգծված է նաև մեծատառը և փոքրատառը նշելու պահանջը: Կարելի է փոքրատառն ընդգծել մեկ, իսկ մեծատառը՝ երկու գծիկով: Կարելի է նաև առաջարկել կատարման օրինակը:

Առաջադրանք 166.

ա) «Կարդա՛» նախադասությունները:

բ) Կարմիր մատիտով ընդգծի՛ր *է* տառը:

Այս առաջադրանքը նման է 54, 74-րդ վարժություններին, սակայն այստեղ կան պատկերներ, որոնք հնարավորություն են տալիս երեխային նախադասություն ստանալ: Վերջինս ավելի աշխուժացնում և գրավիչ է դարձնում աշխատանքը: Այս առաջադրանքը կատարելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել *է* օժանդակ բայի միացյալ արտասանությանը:

Առաջադրանք 167.

Գրիչով անցի՛ր *է Է* տառերի վրայով: Տողը շարունակի՛ր ինքնուրույն:

Տե՛ս առաջադրանք 18-ը:

Առաջադրանք 168.

Գրի՛ր/տեղադրի՛ր (հավելված 46-ից) *Է է* տառերը: Կարդա՛ ստացված բառերը:

Տե՛ս առաջադրանք 133-ը, 157-ը և այլն:

Սակայն այստեղ նորությունն այն է, որ մեծատառի ու փոքրատառի տարբերակման անհրաժեշտություն կա: Դրա համար առաջարկում ենք մինչև առաջադրանքի կատարումը վերհիշել մեծատառի գործածության կանոնը մարդկանց անունները գրելիս: Դա կարելի է իրականացնել՝ հարց ուղղելով դասարանի բոլոր աշակերտներին: Եթե երեխան դժվարանա գրել տառը, առաջարկել ենք նաև հավելվածից այն տեղադրելու տարբերակը:

Առաջադրանք 169.

Լրացրո՛ւ նախադասությունները:

Այս առաջադրանքի նպատակը գրելու կարողության զարգացումն է: Սակայն միևնույն ժամանակ կարևորում ենք *Է* օժանդակ բայի ուղղախոսության ամրապնդումը, որի համար առաջարկում ենք նաև կարդալ գրած նախադասությունները:

Առաջադրանք 170.

ա) Անվանի՛ր պատկերված կենդանիներին: Նշի՛ր այն նկարները, որոնց անվանումները սկսվում են բաղաձայնով:

բ) Գունավորի՛ր այն կենդանու նկարը, որի անվանումը սկսվում է *ը* հնչյունով:

Տե՛ս առաջադրանք 162-ը:

Առաջադրանք 171.

Ձայնավորների շարքում գտի՛ր և նշի՛ր տողի սկզբում տրված տառերը: Հաշվի՛ր և գրի՛ր դրանց թիվը:

Տե՛ս առաջադրանք 163-ը:

Առաջադրանք 172.

Հավելված 47-ում տրված տառերից ընտրի՛ր և փակցրո՛ւ ***ը*** **փոքրատառը և *Ը*մեծատառը:**

Տե՛ս առաջադրանք 141-ը:

Առաջադրանք 173.

Ձայնավորները վերցրո՛ւ կարմիր, իսկ բաղաձայնները՝ կապույտ շրջանի մեջ:

Առաջին հայացքից այս առաջադրանքը միտված է ձայնավորների և բաղաձայնների տարբերակմանը: Սակայն կարևոր նպատակներից է նաև անցած տառերի կրկնությունը: Դժվարանալու դեպքում կարելի է թողնել միայն փոքրատառերը:

Առաջադրանք 174.

Գրիչով անցի՛ր *ը Ը*տառերի վրայով: Տողը շարունակի՛ր ինքնուրույն:

Տե՛ս առաջադրանք 18-ը:

Առաջադրանք 175.

Բառերի վերջում ավելացրո՛ւ *ը* տառը և կարդա՛ ստացված բառերը:

Այս առաջադրանքի նպատակը բառերի վերջավորությունները ճիշտ կարդալ սովորեցնելն է, որի անհրաժեշտությունը նկատվում է հատկապես ԿԱՊԿ ունեցող երեխաների շրջանում: Բուն առաջադրանքը կատարելուց առաջ առաջարկում ենք նախ՝ կարդալ բառը/բառերը, հետո՝ ավելացնել *ը* տառը և նորից կարդալ ստացված բառը:

Առաջադրանք 176.

Արտագրի՛ր՝ նկարը փոխարինելով բառով:

Այս առաջադրանքի նպատակը *ը* տառեր պարունակող բառերի գրության մարզումն է: Երեխան պետք է նկարի փոխարեն ինքնուրույն

գրի համապատասխան բառը, որը բարդ է, սակայն հետաքրքիր: Եթե երեխան, այնուամենայնիվ, դժվարանա, առաջարկում ենք նկարի կողքին գրել անհրաժեշտ բառը, իսկ երեխան կարտագրի:

Առաջադրանք 177.

Կարդա՛ բառազույգերը: Որոշի՛ր՝ ո՞ր տառն է ավել 2-րդ բառում: Նշի՛ր այն:

Այս առաջադրանքի նպատակը կարդալու կարողության, ուշադրության, դիտողականության զարգացումն է, ինչպես նաև՝ անցած տառերի կրկնությունը: Առաջադրանքը կարելի է կատարել նաև հակառակ հաջորդականությամբ: Առաջարկում ենք նաև բառազույգի 2-րդ բառում ընդգծել առաջին բառը, որը, կարծում ենք, ավելի դյուրին կստացվի, հետո առանձնացնել ավելորդ տառը:

Առաջադրանք 178.

ա) Հավելված 48-ից ընտրի՛ր և փակցրո՛ւ տրված նախադասությանը համապատասխանող նկարը:

բ) Արտագրի՛ր նախադասությունը:

Այս առաջադրանքի իրականացման միջոցով զարգացնում ենք երեխայի՝ նախադասությունը կարդալու և կարդացածը հասկանալու կարողությունը՝ հենվելով նկարների վրա:

Առաջադրանքի 2-րդ մասը մի փոքր բարդ է երեխայի համար, քանի որ նա պետք է արտագրի տպագիր տրված նախադասությունը: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք արտագրել ձեռագիր տարբերակից:

179-183-րդ առաջադրանքները նախատեսված են առաջին փուլում անցած հնչյուն-տառերի ամրապնդման համար: Դրանք իրենց բնույթով հիմնականում նման են նախկինում ներկայացված առաջադրանքներին:

Առաջադրանք 184.
Անվանի՛ր պատկերված առարկաները: Նշի՛ր այն նկարները, որոնց անվանումներում *h* հնչյունը բառամիջում է:

Առաջադրանք 185.
ա) Գուշակի՛ր հանելուկը:
բ) Ասա՝ ի՞նչ հնչյունով է սկսվում պատասխան բառը: Ասա՛ այդ հնչյունով սկսվող բառեր:

184, 185-րդ առաջադրանքների նպատակն է ուսումնասիրվող հնչյունի ընկալումը, ճանաչումը, անվանումը, այդ հնչյունով նոր բառեր կազմելը՝ բառասկզբում, բառամիջում և բառավերջում, ինչպես նաև ընդհանրապես վերլուծահամադրական կարողության զարգացումը:

Նմանօրինակ առաջադրանքներ են **199-ը, 214-ը, 227-ը, 241-ը, 252-ը, 266-ը, 267-ը, 281-ը, 295-ը, 307-ը, 320-ը, 335-ը, 377-ը, 394-ը, 410-ը, 425-ը, 439-ը, 468-ը, 485-ը, 515-ը, 531-ը**: Նշված առաջադրանքների մի մասում երեխան նաև գործողություններ է կատարում. նշում է, գունավորում է, նկարում է, հաշվում է այն բառերի քանակը, որում առկա է ուսումնասիրվող հնչյունը և այլն:

Առաջադրանք 186.
Հավելված 52-ում տրված տառերից ընտրի՛ր *h* փոքրատառը և տեղադրի՛ր համապատասխան վանդակում:

Առաջադրանք 187.
Հավելված 53-ում տրված տառերից ընտրի՛ր *Հ* մեծատառը և տեղադրի՛ր համապատասխան վանդակում:

186, 187-րդ առաջադրանքների նպատակն է տառանշանի տեսողական ընկալման, ինչպես նաև համապատասխան հնչյունի հետ

համադրելու կարողության զարգացումը: Առաջադրանքը կարևոր է մեծատառի և փոքրատառի տարբերակման տեսանկյունից: Այն նպաստում է նաև անցած տառերի կրկնությանը և ամրապնդմանը:

Նմանօրինակ առաջադրանքներ են **200-ը, 201-ը, 215-ը, 216-ը, 228-ը, 229-ը, 242-ը, 243-ը, 253-ը, 254-ը, 268-ը, 269-ը, 282-ը, 283-ը, 296-ը, 297-ը, 308-ը, 309-ը, 321-ը, 322-ը, 336-ը, 337-ը, 351-ը, 352-ը, 363-ը, 364-ը, 378-ը, 379-ը, 395-ը, 396-ը, 411-ը, 412-ը, 426-ը, 427-ը, 440-ը, 441-ը, 455-ը, 456-ը, 469-ը, 470-ը, 486-ը, 487-ը, 504-ը, 516-ը, 517-ը, 532-ը, 533-ը:** Այս առաջադրանքների համար սկզբում ընտրվել են տեղադրությամբ խիստ տարբերվող տառերը, աստիճանաբար առաջադրանքները բարդացվել են՝ առաջարկելով նման տեղադրություն ունեցող տառերի շարք: Ուսուցիչը կարող է նաև լրացուցիչ հարցեր առաջադրել՝ «Ձայնավո՞ր է, թե՞ բաղաձայն», «Մեր սովորած տառերից ո՞ր տառին ես նմանեցնում» և այլն:

Առաջադրանք 188.
Տրված տառերի շարքում ընդգծի՛ր *h* փոքրատառերը:

Առաջադրանք 189.
Տրված տառերի շարքում ընդգծի՛ր *Հ* մեծատառերը:

188, 189-րդ առաջադրանքներում պահանջվում է գտնել անհրաժեշտ տառը՝ առանց նախապես տրված օրինակի: Առաջարկված տառաշարքում ուսումնասիրվող տառը մի քանի անգամ է նշված: Այս դեպքում երեխան որոնողական աշխատանքի միջոցով պետք է գտնի բոլոր *h* փոքրատառերը և *Հ* մեծատառերը տրված տառաշարքերում: Առաջադրանքների նպատակն է ամրապնդել տառանշանի յուրացումը, զարգացնել ուշադրությունը, դիտողականությունը, ինչպես նաև՝ անցած տառերի կրկնությունը:

Նմանօրինակ առաջադրանքներ են **202-ը, 203-ը, 217-ը, 218-ը, 255-ը, 256-ը, 270-ը, 271-ը, 284-ը, 285-ը, 298-ը, 299-ը, 309-ը, 310-ը, 311-ը, 323-ը, 324-ը, 338-ը, 339-ը, 353-ը, 354-ը, 365-ը, 366-ը, 380-ը, 381-ը, 397-ը, 398-ը, 413-ը, 414-ը, 422-ը, 428-ը, 429-ը, 436-ը, 442-ը, 443-ը, 457-ը, 458-ը, 471-ը, 472-ը, 489-ը, 490-ը, 505-ը, 518-ը, 519-ը, 535-ը, 536-ը:** Ընդ որում, առաջադրանքներից յուրաքանչյուրը որոշակի հետաքրքիր տարրեր ունի. մի դեպքում պահանջվում է հաշվել տառերի քանակը և ասել/գրել թիվը, այլ դեպքում՝ միայն ընգծել պահանջվող տառը, մի դեպքում տառերը ներկայացված են ուղիղ շարքով, մեկ այլ դեպքում՝ խառը, շրջանաձև, կիսաշրջանաձև, թեքությամբ, տարբեր չափերով, գծերի տակ թաքնված, մի դեպքում՝ տպագիր, մեկ այլ դեպքում՝ ձեռագիր տարբերակներով և այլն:

Նշված առաջադրանքները աստիճանաբար բարդանում են. պահանջվող տառն ընդգծելուց բացի, երեխան անվանում է, օրինակ՝ միայն ձայնավորները, միայն բաղաձայնները, թեքությամբ գրված, կապույտ կամ կարմիր գույնով նշված, գծից աջ կամ ձախ գտնվող տառերը և այլն: Տառաշարքերը ևս ընտրվել են որոշակի սկզբունքով. նախ՝ տարբեր տեղադրություն ունեցող տառեր, ապա՝ նման տեղադրությամբ տառեր:

Առաջադրանք 190.

Կապույտ մատիտով գունավորի՛ր *հ* տառերը:

Ասա՛՝ *հ* հնչյունը ձայնավո՞ր է, թե՞ բաղաձայն:

Այս առաջադրանքի նպատակը ուսումնասիրվող տառանշանի հետ որոշակի գործողություններ կատարելու միջոցով տվյալ տառապատկերի ընկալումը ամրապնդելն է, ինչպես նաև մանր մկանների զարգացումը, միևնույն ժամանակ՝ անցած տառերի յուրացման ամրապնդումն ու տարբերակումը: Առաջադրանքում նաև առաջարկվում է տառը գունավորել կապույտ գույնով, որի նպատակը ձայնավորի ու բաղաձայնի տարբերակումն է: Առաջադրանքը

կատարելիս ուսուցիչը կարող է հարցնել, թե ի՞նչ գույն կընտրի երեխան տվյալ տառապատկերը գունավորելու համար:

Նմանօրինակ առաջադրանքներ են **204-ը, 219-ը, 231-ը, 244-ը, 257-ը, 272-ը, 300-ը, 312-ը, 325-ը, 340-ը, 355-ը, 367-ը, 382-ը, 399-ը, 415-ը, 430-ը, 444-ը, 459-ը, 473-ը, 488-ը, 491-ը, 506-ը, 520-ը, 537-ը:** Յուրաքանչյուր առաջադրանքի համար ընտրված տառերն իրենց ձևով նմանություններ ունեն ուսումնասիրվող տառերի հետ: Այս հանգամանքը երեխային մղում է որոնելու, գտնելու, տարբերակելու, ճանաչելու, հետո՝ գունավորելու կամ եզրագծելու: Սկսած 300-րդ առաջադրանքից՝ տառապատկերները տրված են կետագծերով, որն առավել բարդ է իրականացման համար: Դժվարանալու դեպքում ուսուցիչը կարող է ցույց տալ տվյալ տառի պատկերը, իսկ երեխան կգտնի համապատասխան տառը և կեզրագծի: Կարելի է նաև շարունակել վարժությունները նախորդների նմանությամբ՝ գունավորելով տառապատկերը:

Առաջադրանք 191.
Բառաշարքերում գտի՛ր և նշի՛ր տողի սկզբում տրված բառը: Կարդա՛դրանք:

Այս առաջադրանքի նպատակը միավանկ բառերի ամբողջական պատկերները տեսողական ընկալման միջոցով մտապահելն է (գլոբալ ընթերցանություն): Զարգացնում է նաև մտածողությունը, տարբերություններն ու նմանությունները գտնելու կարողությունը: Որոշ առումներով նման է 134-րդ, 146-րդ, 158-րդ առաջադրանքներին: Սակայն այստեղ նշելու և կարդալու համար առաջարկվում են միայն բառեր, ինչն ավելի հետաքրքիր է դարձնում վարժության ընթացքը: Առաջադրանքի իրականացումը պետք է ավարտվի ընդգծված բառը կարդալով:

Նմանօրինակ առաջադրանքներ են **205-ը, 220-ը, 232-ը, 245-ը, 258-ը, 273-ը, 287-ը, 301-ը, 313-ը, 326-ը, 341-ը, 356-ը, 368-ը, 383-ը, 400-ը, 416-ը, 431-ը, 445-ը, 460-ը, 474-ը, 492-ը, 508-ը, 521-ը, 538-ը**: Նշվածներից մի քանիսում հանդիպում են երկվանկ բառեր, սակայն դրանք շատ չեն և ընթերցելու համար՝ մատչելի, օրինակ, *առու, ոգնի*: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք այդ բառերի տակ վանկային կորեր գծել:

Առաջադրանք 192.
Ժամացույցի մեծ սլաքը դի՛ր/գծի՛ր այնպես, որ ստացվի բառ: Կարդա՛ այն (տե՛ս հավելված 54-ը):

Առաջադրանք 193.
Ժամացույցի փոքր սլաքը դի՛ր/գծի՛ր այնպես, որ ստացվի բառ: Կարդա՛ այն (տե՛ս հավելված 55-ը):

Այս առաջադրանքների իրականացման նպատակն է վանկերը բառում համադրելու և կարդալու կարողության զարգացումը: Ինտերակտիվ եղանակով՝ որոշակի գործողություններ կատարելու միջոցով, երեխան վանկերից կազմում է բառեր և կարդում դրանք: Երեխան կարող է և՛ հավելվածից տեղադրել ժամացույցի մեծ/փոքր սլաքը, և՛ նկարել այն այնպես, որ ստացվի բառ/բառեր: Այս ձևաչափը ուսուցիչը կարող է կիրառել նաև այլ վանկերի հետ աշխատելիս: Դժվարանալու դեպքում ուսուցիչը կարող է տեղադրել սլաքը ճիշտ տեղում, իսկ երեխան կկարդա բառը:

Նմանօրինակ առաջադրանքներ են **206-ը, 207-ը:**

Առաջադրանք 194.
Գրիչով անցի՛ր *ի Հ* տառերի վրայով: Տողը շարունակի՛ր ինքնուրույն:

Այս առաջադրանքին նման առաջադրանքներ առկա են գրեթե բոլոր հնչյուն-տառերի ուսումնասիրման ընթացքում: Սակայն դրանք

աստիճանաբար բարդանում են՝ մեծացնելով երեխայի ինքնուրույնությունը: Ուսուցիչը կարող է որոշել, թե տվյալ դեպքում ինքնուրույն քանի՞ տառ կարող է գրել երեխան:

Նմանօրինակ առաջադրանքներ են **208-ը, 222-ը, 235-ը, 246-ը, 260-ը, 275-ը, 289-ը, 303-ը, 315-ը, 330-ը, 345-ը, 387-ը, 404-ը, 420-ը, 434-ը, 449-ը, 463-ը, 477-ը, 495-ը, 510-ը, 524-ը, 539-ը:**

Առաջադրանք 195.

Վանդակներում լրացրո՛ւ *h* տառը և կարդա՛ ստացված բառերը:

195-րդ առաջադրանքի հիմնական նպատակը ուսումնասիրվող տառի գրությանը վարժվելն է: Մենք ընտրել ենք տառը գրելու այս ձևաչափը, որպեսզի երեխան չձանձրանա և, տարբեր իրավիճակներում գրելով, վարժվի տառի գրությանը՝ ամեն անգամ նոր վանդակում և նոր բառի մեջ գրելով այն: Առաջադրանքի 2-րդ մասում պահանջվում է նաև կարդալ ստացված բառը. վերջինը ևս տառը գրելու դրդապատճառ է, քանի որ երեխային հետաքրքիր է՝ ի՞նչ բառ ստացավ՝ գրելով անհրաժեշտ տառը: Առաջադրանքի կատարումը զարգացնում է նաև կարդալու կարողությունը:

Նմանօրինակ առաջադրանքներ են **209-ը, 223-ը, 261-ը, 276-ը, 290-ը, 304-ը, 316-ը, 331-ը, 346-ը, 360-ը, 372-ը, 388-ը, 405-ը, 421-ը, 435-ը, 450-ը, 464-ը, 478-ը, 496-ը, 511-ը, 525-ը, 540-ը:** Այս առաջադրանքները ևս աստիճանաբար բարդանում են՝ ավելանում է բառերի/տառերի քանակը, սկզբում տառաչափը մեծ է, իսկ հետո փոքրանում է՝ մոտենալով ընդունված տառաչափին: Նշենք, որ հիմնականում ընտրել ենք միավանկ բառեր, որովհետև առաջադրանքի հիմնական նպատակը գրելու կարողության զարգացումն է: Երկվանկ բառեր առկա են միայն *է, ո, ի* տառերով վարժությունների մեջ:

Առաջադրանք 196.
Տրված մեծատառերի կողքին հավելված 56-ից ընտրի՛ր համապատասխան փոքրատառը:

Առաջադրանք 197.
Տրված մեծատառերի կողքին գրի՛ր համապատասխան փոքրատառը:

196, 197-րդ առաջադրանքները մեծատառի և փոքրատառի տարբերակման նպատակ են հետապնդում, միևնույն ժամանակ նմանօրինակ վարժությունների միջոցով ամրապնդվում է անցած տառերի տեսողական ընկալումը: 196-րդ առաջադրանքը մատչելի է երեխայի համար, քանի որ գրելու գործողություն չի պահանջում, և հուշող հանգամանք է մեծատառի/փոքրատառի օրինակը: Իսկ 197-րդ առաջադրանքի կատարումը մի փոքր բարդ է, քանի որ երեխան գրելու գործողություն պետք է կատարի: Այս դեպքում ևս առաջարկել ենք օգնող հանգամանքներ. օրինակը տրված է ձեռագիր, երեխան գրում է միայն փոքրատառերը: Առաջարկել ենք նախորդ առաջադրանքում տրված տառերը:

Նմանօրինակ առաջադրանքներ են **210-ը, 211-ը, 224-ը, 225-ը, 249-ը, 262-ը, 277-ը, 278-ը, 292-ը, 305-ը, 318-ը, 332-ը, 347-ը, 361-ը, 373-ը, 389-ը, 406-ը, 512-ը:** Նշված առաջադրանքներն աստիճանաբար բարդանում են. փոխվում են 2-րդ հատվածի տառերը, տրված են փոքրատառերը, երեխան պետք է գտնի համապատասխան մեծատառերը (նախորդ գործողության հակառակը): Առանց տեղադրելու գործողությունը կատարելու՝ առաջարկվում է միանգամից գրել տառերը, որոնց քանակն է ավելանում, ձայնավորների և բաղաձայնների՝ գույնով տարբերակելու խնդիր է դրվում և այլն:

Առաջադրանք 198.

ա) Կարդա՛ նախադասությունները:

բ) Արտագրի՛ր/ընդգծի՛ր *h* տառն ունեցող բառերը:

Այս առաջադրանքի նպատակը կարդալու և գրելու կարողությունների, ուշադրության, դիտողականության զարգացումն է. վարժությունն իրականացնելուն օգնելու են վանկային կորերը:

Առաջադրանքի 2-րդ կետի պահանջով երեխան պետք է նախադասությունից առանձնացնի բառեր, որոնք նախապես ենթարկվում են հնչյունային վերլուծության: Այս դեպքում շահեկան է, որ երեխան նախ վանկերով արտաբերի գրվող բառը, հետո գրի՝ ապահովելով նաև խոսքաշարժողական զգայարանի մասնակցությունը գրելու գործընթացին: Եթե երեխան դժվարանա գրել անհրաժեշտ բառը, առաջարկում ենք գրելու գործողությունը փոխարինել բառն ընդգծելու գործողությամբ:

Նմանօրինակ առաջադրանքներ են **213-ը, 226-ը, 265-ը, 319-ը, 467-ը, 503-ը, 514-ը, 530-ը, 546-ը:**

Առաջադրանք 212.

Նշի՛ր տղաների անունները:

Այս առաջադրանքի նպատակը անցած տառերով կազմված բառերը կարդալու կարողության զարգացումն է: Երեխայի համար կարող է գրավիչ լինել այն հանգամանքը, որ պետք է առանձնացնի հատկապես տղաների անունները: Առաջադրանքի կատարումը դյուրինացնում է նաև վանկային կորերի առկայությունը:

Նմանօրինակ առաջադրանքներ են **236-ը, 250-ը, 334-ը**: 236-րդ առաջադրանքում ավելանում է ուսումնասիրվող տառն ընդգծելու պահանջը, որի նպատակը նորածանոթ տառապատկերի ամրապնդումն է:

Առաջադրանք 250-ում խնդիր է դրվում մարդկանց անուններն առանձնացնել և արտագրել: Եթե երեխան դժվարանա, կարելի է

առաջադրանքի այդ պահանջը չկատարել կամ առաջարկել կատարման օրինակը: 334-ում ևս արտագրելու պահանջ կա, սակայն՝ ձեռագիր տարբերակից, որը երեխաների համար առավել հեշտ է:

Առաջադրանք 221.
Համապատասխան գույնի վանկերը միացրո՛ւ սլաքով և ստացի՛ր բառեր: Կարդա՛ դրանք:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը վանկային պատկերների մտապահումն ու յուրացումն է, ինչպես նաև՝ վանկերով կարդալու կարողության զարգացումը: Առաջադրանքում վանկերը տրված են 2 շարքով, տարբեր գույներով, ինչը հուշում է, թե ո՛ր գույնի վանկը որի հետ պետք է համադրել, որպեսզի բառ կազմվի: Համադրելուց հետո պետք է կարդալ վանկը: Եթե երեխան դժվարանա, առաջարկում ենք ստանալ տրված վանկերը առանձին գունավոր թղթե շերտիկներից և դնել իրար կողքի, որպեսզի բառի ամբողջական պատկերը տեսանելի լինի:

Նմանօրինակ առաջադրանքներ են **259-ը, 274-ը, 288-ը, 302-ը, 344-ը, 359-ը, 371-ը, 386-ը, 403-ը, 419-ը, 433-ը, 448-ը, 462-ը, 480-ը, 499-ը, 527-ը, 541-ը:** Դրանց նպատակն ընդհանուր է, սակայն տարբերվում են առանձին տարրերով, օրինակ՝ վանկերը տրված են գույներով, երկրաչափական պատկերների մեջ, ձեռագիր կամ տպագիր տառերով: Մի դեպքում երեխան պետք է միայն համադրի, մի դեպքում՝ կարդա, մեկ այլ դեպքում՝ գրի: Նշված առաջադրանքների մի խմբի համար էլ անհրաժեշտ է, որ երեխան ընդգծի նորածանոթ տառը:

Առաջադրանք 230.

Անվանի՛ր նկարները: Տրված տառերից նշի՛ր այն տառը, որով սկսվում են նկարների անվանումները:

Այս առաջադրանքի նպատակը ուսումնասիրվող տառապատկերի ամրապնդումն է, դրա համադրումը հնչյունի հետ: Սակայն, մինչ այդ, երեխան նաև հնչյունային վերլուծություն է կատարում, առանց որի չի կարող առաջադրանքի հիմնական պահանջն իրականացնել: Հետևաբար ցանկալի է, որ երեխան հստակ և ճշգրիտ անվանի նկարներում պատկերված առարկաները:

Առաջադրանք 233.

Տրված բառերում ընդգծի՛ր *Զ զ* տառերը:

Այս առաջադրանքի հիմնական նպատակը նորածանոթ տառապատկերի ընկալումն է, սակայն, քանի որ այն ներկայացված է բառի մեջ, երեխան ակամա ընկալում է նաև բառապատկերը: Առաջադրանքի պահանջում չի նշվում, սակայն, կարելի է առաջարկել նաև կարդալ տրված բառերը:

Առաջադրանք 234.

Կատարի՛ր թվաբանական գործողությունները և ստացի՛ր բառեր: Կարդա՛ դրանք:

Տե՛ս առաջադրանք 135-ը:

Առաջադրանք 236.

ա) Նշի՛ր աղջիկների անունները:

բ) Ընդգծի՛ր Զ մեծատառերը:

Տե՛ս առաջադրանք 212-ը:

Առաջադրանքի 2-րդ հատվածը պահանջում է նաև ընդգծել *Զ* մեծատառերը: Վերջինիս նպատակը ուսումնասիրվող տառապատ-

կերի (*Ջ* մեծատառի) ամրապնդումն է, ինչպես նաև մարդկանց անունները մեծատառով գրելու կանոնի կրկնությունը, որի ընթացքում երեխան նաև կարդալու վարժություն է կատարում:

Նմանօրինակ առաջադրանքներ են **306-ը, 334-ը, 407-ը, 513-ը,** որոնցում աստիճանաբար բարդանում են իրականացվող գործողությունները. երեխան կարդում է, առանձնացնում տղայի կամ աղջկա անունը, ապա նաև արտագրում թե՛ տպագիր և թե՛ ձեռագիր օրինակներից:

Առաջադրանք 237.

ա) Լսի՛ր շուտասելուկը և կրկնի՛ր:

բ) Հաշվի՛ր՝ քանի՛ *զ* կա: Գրի՛ր այդ տառերը շրջանների մեջ:

Առաջադրանքի իրականացումը ենթադրում է ուսումնասիրվող տառանշանի գրառում հնչյունային վերլուծության միջոցով: Մի կողմից զարգացնում ենք հնչյունային ընկալումը, մյուս կողմից՝ տվյալ հնչյունը տառի հետ համադրելու կարողությունը: Առաջադրանքի նպատակներից է նաև տառի գրության վարժությունն ու հնչյունի արտասանության մարզումը խոսքում:

Առաջադրանք 238.

ա) Անվանի՛ր պատկերված առարկաները (տե՛ս հավելված 67): Մի տնակում տեղադրի՛ր *զ* հնչյունով սկսվող անվանումներ ունեցող նկարները, մյուսում՝ *ս*-ով:

բ) Հաշվի՛ր՝ ամեն տնակում քանի՞ նկար կա: Գրի՛ր/տեղադրի՛ր թիվը (տե՛ս հավելված 68-ը):

Առաջադրանքի նպատակը նման հնչողություն ունեցող հնչյունների տարբերակումն է:

Առաջադրանք 239.

Կարդա՛ բառազույգերը: Ընդգծի՛ր *զ, ս* տառերը:

Այս առաջադրանքը նման է 238-րդին: Նպատակը հնչողությամբ մոտ հնչյունների տարբերակումն է բառերում, ինչպես նաև դրանց տառապատկերների ամրապնդումը: Ընդհանրապես, նման առաջադրանքների կատարումը բարդ է ԿԱՊԿ ունեցող երեխաների համար, սակայն՝ խիստ անհրաժեշտ: Առաջարկում ենք յուրաքանչյուր բառազույգ ընթերցելուց հետո կատարել բառերի հնչյունատառային վերլուծություն՝ երեխայի ուշադրությունը կենտրոնացնելով տարբերվող հնչյունների վրա: Կարելի է առաջադրել հարցեր, օրինակ՝ «Ի՞նչ հնչյուն ես լսում *մազ* բառի վերջում, իսկ *մաս* բառի վերջում նույն հնչյո՞ւնն ես լսում, թե՝ այլ» և այլն:

Նմանօրինակ առաջադրանքներ են, **279-ը, 317-ը, 349-ը, 391-ը, 408-ը, 437-ը 481-ը, 483-ը, 500-ը, 502-ը:** Նշված առաջադրանքներում պահանջվում է նաև բառազույգերից արտագրել միայն կոնկրետ հնչյունով բառերը, ինչը նպաստում է հնչյունային վերլուծություն կատարելու ունակության զարգացմանը, ինչպես նաև նման հնչողություն ունեցող հնչյունների տարբերակմանը: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք բանավոր վարժություններ կատարել, հետո անցնել գրելուն, կամ երկու վանկ ունեցող բառերում որոշել վանկերի քանակը, գծել վանկային կորերը և այլն:

Առաջադրանք 240.

ա) Կարդա՛ բառակապակցությունները և արտագրի՛ր:

բ) Դրանցից 1-ով կազմի՛ր նախադասություն և գրի՛ր:

Առաջադրանքի նպատակը կարդալու կարողության զարգացումն է: Բառակապակցության ընթերցումը մի աստիճանով բարդ է բառի ընթերցումից: Հետևաբար առաջարկում ենք բառերը ենթարկել վանկային վերլուծության, ընդգծել վանկային կորերով, հետո միայն

ընթերցել: Առաջադրանքի 2-րդ հատվածում պահանջվում է նաև նախադասություն կազմել, որն ավելի բարդ է երեխայի համար, սակայն ցանկալի: Եթե երեխան դժվարանա, կարելի է միայն բանավոր կատարել, կամ մյուս աշակերտներին առաջարկել կազմել նախադասություններ, իսկ ԿԱՊԿ ունեցող երեխան արտագրի դրանցից մեկը:

Նմանօրինակ առաջադրանքներ են **251-ը, 280-ը, 294-ը, 350-ը, 362-ը, 376-ը, 393-ը, 453-ը:** Նշված առաջադրանքները որոշակիորեն տարբերվում են իրարից, օրինակ՝ բառակապակցության անդամներից մեկը տրված է նկարի տեսքով, իսկ երեխան պետք է գրի անվանումը, մեկ այլ դեպքում բառակապակցությունները տրված են տպագիր, կամ ձեռագիր, վանկային կորերով և այլն:

Առաջադրանք 247.

Անվանի՛ր պատկերված առարկաները: Շրջանի մեջ գրի՛ր այն տառը, որի հնչյունով սկսվում են բոլոր բառերը:

Տե՛ս առաջադրանք 230-ը:

Ի տարբերություն 230-ի, որտեղ երեխան պետք է նշեր պահանջվող տառը, այս առաջադրանքն իրականացնելիս պետք է գրի ուսումնասիրվող հնչյունի տառը, որը հետաքրքիր իրավիճակում տառը գրելու վարժություն է և նպաստում է գրելու կարողության զարգացմանը: Միևնույն ժամանակ հնչյունային վերլուծություն կատարելու կարողությունն է զարգանում:

Առաջադրանք 248.

ա) Գուշակի՛ր հանելուկը:

բ) Ասա՛՝ ի՞նչ հնչյունով է սկսվում: Շրջանների մեջ գրի՛ր այդ տառը:

Տե՛ս առաջադրանք 247-ը:

Սակայն այստեղ աշխատանքն իրականացվում է հանելուկի պատասխանը կռահելու միջոցով:

Նմանօրինակ առաջադրանքներ են **264-ը, 374-ը, 423-ը, 452-ը, 482-ը, 484-ը, 493-ը, 498-ը, 501-ը, 529-ը, 543-ը:** Նշված առաջադրանքներում երեխան գրում է ոչ միայն պատասխան-բառի առաջին հնչյունի տառը, այլև ամբողջ բառը, որը գրելու կարողությունն է զարգացնում: Միևնույն ժամանակ, առաջադրանքների պահանջներն ամեն անգամ փոփոխվում են. մի դեպքում երեխան այդ բառն ընտրում է տրված 3 բառերից, մեկ այլ դեպքում՝ նկարներից, մի դեպքում տրված է պատասխան-բառի գծապատկերը, մեկ այլ դեպքում առաջարկվում է նկարել պատասխանը (օրինակ՝ ծիածանը) և այլն:

Առաջադրանք 305.

Անվանի՛ր նկարները: Խառնված տառերից ստացի՛ր տասխան նկարի անվանումը և գրի՛ր:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը տառերը բառում համադրելու և կարդալու կարողության զարգացումն է: Աշխատանքն իրականացվում է նկարների հիման վրա: Այնուամենայնիվ, եթե երեխան դժվարանում է, կարելի է հուշել առաջին տառը, կամ, մինչև գրելով առարկաների անվանումները, հնչյունային վերլուծության ենթարկել՝ որոշելով հնչյունների հերթականությունը տվյալ բառում և այլն:

Նմանօրինակ առաջադրանքներ են **348-ը, 466-ը:**

Առաջադրանք 314.

ա) Հաշվի՛ր տրված բառերի վանկերի քանակը:

բ) Կարդա՛ միավանկ բառերը:

Առաջադրանքի նպատակը վանկային վերլուծություն կատարելու կարողության զարգացումն է, որը կարդալու ուսուցման հիմքն է: Երեխան տեսողական ընկալման միջոցով կկարողանա առաջադրված բառերը բաժանել վանկերի: Առաջադրանքի 2-րդ մասում կառանձնացնի միավանկ բառերը և կկարդա դրանք: Եթե երեխան

դժվարանա, ուսուցիչը կարող է հուշել, որ միավանկ բառն առանձնանում է մեկ վանկային կորով:

Հնարավորության դեպքում ուսուցիչը կարող է առաջարկել երեխային ընթերցել նաև մյուս բառերը, ինչը տվյալ դեպքում պարտադիր պայման չէ:

Առաջադրանք 327.
Կարդա՛ գույնով առանձնացված տառը, հետո՝ բառը:

Առաջադրանք 328.
Կարդա՛ գույնով առանձնացված վանկը, հետո՝ բառը:

327, 328-րդ առաջադրանքների նպատակը ուսումնասիրվող տառապատկերի ամրապնդումն է և դրանով կազմված բառերի ընթերցումը: Առաջին դեպքում վարժության համար առաջարկել ենք միավանկ բառեր, որից հետո՝ հիմնականում երկվանկ բառեր:

Նմանօրինակ առաջադրանքներ են **342-ը, 343-ը, 357-ը, 358-ը, 369-ը, 370-ը, 384-ը, 385-ը, 401-ը, 402-ը, 417-ը, 418-ը, 432-ը, 446-ը, 447-ը, 461-ը, 475-ը, 476-ը, 493-ը, 494-ը, 522-ը, 523-ը:** Առաջադրանքները կարող են համալրված լինել վանկային կորերը գծելու, միայն միավանկ բառերը կարդալու, վանկերի քանակը հաշվելու, ուսումնասիրվող տառն ընդգծելու և նման այլ պահանջներով:

Առաջադրանք 375.
Վանդակների մեջ գրի՛ր առարկաների անվանումները:

Այս առաջադրանքի կատարումը բառը ինքնուրույն գրելու կարողության զարգացման խնդիր է լուծում: Սակայն այս դեպքում ևս առաջարկել ենք բառի գծապատկերը: Դժվարանալու դեպքում ուսուցիչը կարող է վանդակներից մեկը կամ երկուսը լրացնել:

Առաջադրանք 390.

Տրված նկարներին գծով միացրո՛ւ համապատասխան բառը: Կարդա՛ դրանք:

Այս առաջադրանքի նպատակը կարդալու կարողության զարգացումն է: Երեխան կարող է ճանաչել ամբողջական բառապատկերը և համադրել համապատասխան նկարի հետ:

Նմանօրինակ առաջադրանքներ են **509-ը, 528-ը:** Պայմանավորված երեխայի հնարավորություններով՝ ուսուցիչը կարող է առաջարկել նաև կարդալ անհրաժեշտ բառերը:

Առաջադրանք 392.

Կարդա՛ նախադասությունը: Հավելված 94-ում տրված նկարներից ընտրի՛ր համապատասխան պատկերը:

Այս առաջադրանքն իր բնույթով նման է 390-րդին, սակայն բառերի փոխարեն առաջարկել ենք նախադասություններ:

Նմանօրինակ առաջադրանք է **409-ը,** որում առկա է նաև նախադասությունը գրելու պահանջը:

Առաջադրանք 424.

ա) Կարդա՛: Արտագրի՛ր միայն *չ* տառով սկսվող բառերը:

բ) Դրանցից երկուսով կազմի՛ր նախադասություններ: Մեկը գրի՛ր տետրում:

Այս առաջադրանքի նպատակը կարդալու, գրելու կարողությունների զարգացումն է: Միևնույն ժամանակ զարգանում են տառային վերլուծություն կատարելու, խոսք կառուցելու կարողությունները: Առաջադրանքի առաջին մասն իրականացնելիս հնարավոր է՝ երեխան դժվարանա երկվանկ բառերի ընթերցանության ժամանակ: Նման իրավիճակից խուսափելու համար առաջարկում ենք բառերի տակ

մատիտով վանկային կորեր գծել և վերլուծել: Իսկ նախադասություններ կազմելիս առաջարկում ենք ընտրել այն բառերը, որոնք առկա են օրվա դասի բնագրում:

Նմանօրինակ առաջադրանք է **438-ը:**

Առաջադրանք 451.

Տրված տառերից մեծատառերն արտագրի՛ր ձախ տնակում, փոքրատառերը՝ աջ:

Այս առաջադրանքը միտված է անցած տառերն ամրապնդելուն՝ թե՛ բանավոր և թե՛ գրավոր, ինչպես նաև ձայնավորների ու բաղաձայնների տարբերակմանը:

Նմանօրինակ առաջադրանքներ են **465-ը, 479-ը, 497-ը, 526-ը, 542-ը:**

Առաջադրանք 507.

Կատարի՛ր թվաբանական գործողությունը:

Տե՛ս առաջադրանք 135-ը:

Առաջադրանք 544.

ա) Լրացրո՛ւ բաց թողնված տառերը:

բ) Գուշակի՛ր՝ ո՞ր հեքիաթի հերոսներն են: Գրի՛ր հեքիաթի անվանումը:

Առաջադրանքի նպատակը ուսումնասիրվող տառի գրության ամրապնդումն է: Վարժության օրինակները վերցված են երեխաներին հայտնի հեքիաթից, որը շահագրգռություն է ստեղծում աշխատելու համար: Միևնույն ժամանակ առաջարկվում է հիշել հեքիաթի անվանումը: Այս հարցում կարող ենք դիմել դասարանի մյուս աշակերտների օգնությանը, հետո՝ գրառել:

Առաջադրանք 545.

Տրված խառը բառերն արտագրի՛ր ճիշտ տեղում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը գրելու կարողության զարգացումն է: Վարժությունը գույներով է ներկայացված, ինչը կարող է հուշել երեխային, թե ո՛ր բառը որի հետ պետք է համադրի: Արտագրելուց հետո ցանկալի է, որ երեխան կարդա ստացված նախադասությունները: Դժվարանալու դեպքում՝ առաջարկում ենք բառերը ներկայացնել վանկային կորերով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավետիսյան Յու. և Զաքարյան Հ., Հայոց լեզու: Հնչյունաբանություն, ուղղախոսություն, ուղղագրություն: Երկրորդ՝ լրացված և մշակված հրատարակություն; 2008, էջ 5-6:
2. Գյուլամիրյան Ջ. Հ., «ԶԱՆԳԱԿ» այբբենարանի և «ԵՍ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՄ ԳՐԵԼ» աշխատանքային տետրերի մեթոդական ուղեցույց, Եր., 2003, 178 էջ:
3. Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ուսուցման մեթոդական ձեռնարկ, մայրենի (1-4-րդ դասարաններ), Աշխ. խումբ՝ Կ. Չիբուխչյան, Լ. Ավագյան, Գ. Մկրտչյան և այլք, Եր., 2009, 63 էջ:
4. Միքայելյան Ա. Վ., Մայրենի լեզվի ուսուցման մի քանի հարցեր ներառական կրթության պայմաններում, «Հատուկ մանկավարժություն և վերականգնողական հոգեբանություն» գիտական հանդես 1(2), Եր., 2011, էջ 36-41:
5. Միքայելյան Ա. Վ., Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ուղղագրական կարողությունների յուրացման նախապատրաստումը գրաճանաչության շրջանում, «Մանկավարժական միտք», 3-4, 2017, էջ 430-433:
6. Ա.Հ. Սվաջյան, Թ.Յու.Ազատյան, Լ.Ա. Բաբայան, Է.Ռ. Թադևոսյան, Մ.Ռ. Հարությունյան, Ա.Տ. Մանուկյան, Ս.Վ. Մուրադյան, Հ.Ա. Ադամյան, Հ.Վ. Օհանյան. Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ մանկավարժների համար (2021) Հանրապետական կենտրոն, 2022, էջ 6-8
7. Սարգսյան Վ. Ա., «Այբբենարան», ուսուցչի ձեռնարկ, Եր., 2011,
8. 236 էջ:
9. Սարգսյան Վ. Ա., «Այբբենարան», Եր., 2019, 155 էջ:
10. Քյուրքչյան Ա. Ն., Տեր-Գրիգորյան Լ. Ա., «Այբբենարան» ուսուցչի ձեռնարկ, Եր., 2007, 65 էջ:
11. Քյուրքչյան Ա. Ն., Տեր-Գրիգորյան Լ. Ա., «Այբբենարան», Եր., 2010, 124 էջ:
12. Аксенова А. К., Методика обучения русскому языку в коррекционной школе, М., <<Владос>>, 2002, 320 с.

13. Занимательное азбуковедение: Кн. для уяителя /Сост. В. В. Волина/, М., 1991, 368 с.
14. Beecher, L., & Childre, A. (2012). Increasing literacy skills for students with intellectual and developmental disabilities: Effects of integrating comprehensive reading instruction with sign language. Education and Training in Autism and Developmental Disabilities, 47, 487-501.
15. Copeland, S., & Keefe, E. (2007). Effective literacy instruction for students with moderate or severe disabilities. Baltimore, MD: Brookes Publishing.
16. Deeney, T. (2010). One-minute fluency measures: Mixed messages in assessment andinstruction. The Reading Teacher, 63, 440-450. doi:10.1598/RT.63.6.1
17. Griffith, L.W., & Rasinski, T. (2004). A focus on fluency: How one teacher incorporated fluency with her reading curriculum. The Reading Teacher, 58, 126-137. doi:10.1598/rt.58.2.1
18. Hudson, M. E., & Test, D. W. (2011). Evaluating the evidence base of shared story reading to promote literacy for students with extensive support needs. Research and Practice for Persons with Severe Disabilities, 36, 34-45. doi:10.2511/rpsd.36.1-2.34
19. Kluth, P., & Chandler-Olcott, K. (2008). A land we can share: Teaching literacy to students with autism. Baltimore, MD: Brookes Publishing.
20. Light, J., & McNaughton, D. (2012, August 31). Literacy instruction for individuals with autism, cerebral palsy, Down syndrome, and other disabilities. Retrieved from http://aacliteracy.psu.edu/
21. Lundberg, I., & Reichenberg, M. (2013). Developing reading comprehension among students with mild intellectual disabilities—an intervention study. Scandinavian Journal of Educational Research, 87, 89–100. doi:10.1080/00313831.2011.623179
22. Rasinski, T. V. (2012). Why reading fluency should be hot. Reading Teacher, 65, 516-522. doi:10.1002/TRTR.01077
23. Sharon Vaughn, Candace S. Bos, (2012), Strategies for Teaching Students with Learning and Behavior Problems, 24-26.

24. Schumm, Jeanne Shay, (1999), Adapting reading and math materials for the inclusive classroom:kindergarten through grade five/ Jeanne Shay Schumm, 30-32.
25. National Institute of Child Health and Human Development. (2000). Report of the National Reading Panel. Teaching children to read: An evidence-based assessment of the scientific research literature on reading and its implications for reading instruction: Reports of the subgroups (NIH Publication No. 00-4754). Washington, DC: U.S. Government Printing Office. http://www.nichd.nih.gov/publications/pubs/nrp/documents/report.pdf
26. OCED 2015, Universal Basic Skills: What Countries Stand to Gain,
27. OECD publishing.doi.org/10.1787/9789264234833-en